

Թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով հատուկ ներկայացուցչի և  
համակարգողի գրասենյակ

**Մարդկանց թրաֆիքինգի զոհերի նկատմամբ  
անպատժելիության սկզբունքի արդյունավետ  
կիրառմանն ուղղված քաղաքականությունը և  
օրենսդրական առաջարկությունները**



Եվրոպայում անվտանգության և համագործակցության  
կազմակերպություն

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկանց շահագործումը ժամանակակից ստրկության զանգվածային երևույթ է, երբ միլիոնավոր մարդիկ գրկվում են իրենց անկախությունից և ընտրության ազատությունից, խաբեությամբ և բռնության կիրառմամբ շահագործվում են՝ սեռական և աշխատանքային շահագործումից մինչև հանցագործության մեջ հարկադրաբար ներգրավումն ու օրգանների հեռացումը կամ շահութաբեր անօրինական այլ շահագործումը<sup>1</sup>: Նրանց միայն չնչին մասն է որպես լուրջ հանցագործության զոհ ստանում աջակցություն և պաշտպանություն, հաճախ նրանք անգամ ձերբակալվում են, ազատագրվում և ենթարկվում են պատժի՝ անօրինական միգրացիայի հետ կապված իրավախախտումների, ինչպես նաև մարմնավաճառությամբ զբաղվելու կամ անօրինական աշխատանք իրականացնելու, սուտ ցուցմունք տալու կամ վարչական իրավախախտումներ կատարելու համար:

Ավելին, մարդկանց շահագործումը՝ հանցագործության մեջ հարկադրաբար ներգրավմամբ դեպքերի աճը նույնպես ստիպում է մարդկանց շահագործման զոհերին իրականացնել իրավախախտումներ, ինչպիսին են օրինակ՝ գողությունը, թմրամիջոցների առքուվաճառքը, կանաքիսի աճեցումը և խարդախությունը: Շատ հաճախ թրաֆիքինգ իրականացնողների կանխամտածված ռազմավարությունը կայանում է նրանում, որ զոհերին կանգնեցնում են քրեական պատասխանատվության ենթարկվելու ռիսկի առաջ և այսպիսով կարողանում են հմտորեն օգտագործել զոհերին հանցավոր գործողություններում: Եվ դա է պատճառը, որ թրաֆիքինգի զոհերը սովորաբար իրականացնում են հանցավոր գործողություններ կամ այլ իրավախախտումներ, որոնք ուղղակիորեն կապված են կամ բխում են իրենց՝ թրաֆիքինգի ենթարկված լինելուց: Այս դեպքերում նրանք իրավապահների ուշադրության կենտրոնում հայտնվում են որպես իրավախախտներ և հեշտությամբ կարող են չնույնացվել որպես ծանր հանցագործության իրական զոհեր: Ուստի երկրները պետք է քաջատեղյակ լինեն առկա այս միտումների մասին, որպեսզի կարողանան իրականացնել թրաֆիքինգի զոհերի ճիշտ նույնացում, ինչպես նաև թրաֆիքինգի արդյունավետ քննություն՝ ապահովելով թրաֆիքինգի զոհերի իրավունքների հուսալի պաշտպանություն՝ ներառյալ թրաֆիքինգի զոհերի անպատժելիությունն այնպիսի իրավախախտումների համար, որոնք անմիջականորեն պայմանավորված են եղել նրանց՝ թրաֆիքինգի զոհ լինելով կամ իրականացվել են ուղղակիորեն այդ իրադրությամբ պայմանավորված :

Մարդկանց շահագործման զոհերի անպատժելիության սկզբունքն ամրագրված է մի քանի միջազային չափանիշներով, այդ թվում օրենսդրական և քաղաքական համապարտադիր գործիքներով: ԵԱՀԿ տարածաշրջանում անդամ պետությունները պարտավորություն են ստանձնել իրականացնել մարդու իրավունքների վրա հիմնված և զոհակենտրոն մոտեցում մարդկանց շահագործման դեմ պայքարի ոլորտում, մոտեցում, որը հարգում է մարդկանց շահագործման զոհերի իրավունքները և արժանապատվությունը<sup>2</sup>: Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը կոչ է անում կառավարություններին և օրենսդիրներին ազգային օրենսդրությամբ նախատեսել թրաֆիքինգի զոհերի իրավունքների պաշտպանության վրա

<sup>1</sup> ԱՄԿ, Հարկադիր աշխատանքի գլոբալ ուսումնասիրություն, 2012թ: 2012թ. ուսումնասիրության համաձայն, 20,9 միլիոն մարդ գտնվում է հարկադիր աշխատանքի վիճակում:

<sup>2</sup> ԵԱՀԿ Նախարարների խորհուրդ, Մարդկանց թրաֆիքինգի հոչակագիր, 2002թ.:

օրենսդրության և քաղաքականության բացասական ազդեցությունը բացառող դրույթների երաշխավորում<sup>3</sup>: Թրաֆիքինգի զոհերի անպատժելիությունն այն հանցագործությունների համար, որոնք նա կատարել է թրաֆիքինգի ենթարկվելու ժամանակահատվածում կամ որպես թրաֆիքինգի ենթարկվելու հետևանք՝ հանդիսանում է մարդու իրավունքների հիման վրա ձևավորված մոտեցման կարևոր տարր<sup>4</sup>: Այս հանձնարարությունների իրականացման համար անդամ պետություններին աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ ԵԱՀԿ թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով հատուկ ներկայացուցիչը և համակարգողը (այսուհետ՝ ՀՆ)՝ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի դաշնակից գործընկերների հետ սերտ համագործակցությամբ նախաձեռնել է քաղաքականության ուղեցույցի մշակում, որն ուղղված է օգնելու անդամ պետություններին գործնականում իրականացնել թրաֆիքինգի զոհերի անպատժելիության սկզբունքը:

Սույն փաստաթուղթն ուսումնասիրում է անպատժելիության սկզբունքը միջազգային օրենսդրության մեջ, ցույց է տալիս այդ սկզբունքի իրագործման շրջանակը և քննարկում է այդ սկզբունքի պրակտիկ կիրառման հետ կապված մարտահրավերները: Այն ներառում է գործնական օրինակներ և դատական գործեր, որոնք տրամադրվել են այս հարցերով զբաղվող ազգային գործակալությունների, հասարակական կազմակերպությունների և իրավաբանների կողմից, մասնավորապես՝ Հավասար հնարավորությունների և ռասիզմի դեմ Բեյզինգի Կենտրոնի, Հոլանդիայի թրաֆիքինգի հարցերով ազգային զեկուցողի, ինչպես նաև Միավորված Թագավորության դատարանների և իրավաբանների կողմից: Փաստաթուղթի վերջում առկա է գործնական ուղեցույց, ինչպես նաև քաղաքականության և օրենսդրական բարեփոխումների վերաբերյալ առաջարկություններ՝ թրաֆիքինգի զոհերի անպատժելիության սկզբունքի արդյունավետ իրականացման համար:

---

<sup>3</sup> ԵԱՀԿ Մշտական հանձնաժողով, Որոշում թիվ 557/1, ԵԱՀԿ-ի Թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների պլան:

<sup>4</sup> ԵԱՀԿ Նախարարների խորհուրդ, Որոշում թիվ 1, ԵԱՀԿ-ի դերակատարության բարձրացումը՝ թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում:

## ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԶՈՇԵՐԻ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Մարդկանց շահագործման գոհերի նկատմամբ պատժի կիրառումն այն հանցագործությունների համար, որոնք կատարվել են շահագործման ենթարկվելուարդյունքում, հանդիսանում է նրանց հիմնարար արժանապատվության խախտում: Այն խոչընդոտում է իրականության բացահայտմանը և արդարության հաստատմանը: Այսպիսի պատիժը մեղադրանք է առաջադրում գոհերին՝ իրենց թրաֆիքինգի ենթարկած անձանց կողմից իրականացված հանցագործությունների համար: Եթե այդ անձինք չգտնվեին շահագործման վիճակում, ապա նրանք չէին իրականացնի այդ հանցագործությունները: Թրաֆիքինգի գոհերի պատժելիությունը կարող է հավասարազոր լինել պետության կողմից գոհերի նկատմամբ հետապնդման իրականացմանը ոչ միայն նրա համար, որ պետությունը չի կարող հաշվի առնել այն ծանր հանցագործությունները, որոնք թրաֆիքինգի կազմակերպիչները իրականացնում են գոհերի նկատմամբ, այլ նաև այն պատճառով, որ պետությունը չի կարող ճանաչել/ նույնացնել թրաֆիքինգի գոհերին և սրում է նրանց զոհացումը՝ անարդարացի պատժելով նրանց: Որպես գոհ վերաբերվելու փոխարեն, նրանց վերաբերվում են որպես հանցագործների: Այս գործելաոճը/ պրակտիկան նպաստում է մարդկանց շահագործման զարգացմանը, ձախողում է իրական հանցագործների բացահայտումը, կաշկանդում է թրաֆիքինգի գոհերին ցուցմունք տալ իրենց շահագործողների դեմ, անգամ թույլ է տալիս թրաֆիքինգ իրականացնողներին ազդեցություն ունենալ գոհերի վրա՝ սպառնալով պետության կողմից կիրառվելիք պատիժներով: Թրաֆիքինգ իրականացնողները կնպաստեն գոհերի պատժելուն, քանի որ դա ձեռնառու է թրաֆիքինգի կազմակերպիչներին. այն երաշխավորում է գոհերի պատասխանատվության ենթարկվելն այդ հանցագործությունների համար, մինչդեռ իրական հանցագործներին հաշտվում է մնալ անպատիժ:

Մարդկանց շահագործման գոհերի անպատժելիության հիմնավորումը կայանում է նրանում, որ շահագործման ենթարկվելու ժամանակ գոհը հնարավոր է, որ կատարի իրավախախտում, ինչպիսին է օրինակ պետական սահմանի ապօրինի հատումը կամ գողությունը: Իրականում թրաֆիքինգի գոհը գործում է, գտնվելով կախյալ վիճակում: Նրանք ազատությունը խիստ սահմանափակ է, կամ իսպառ բացակայում է, ինչը պայմանավորված է իրենց նկատմամբ իրականացվող հսկողության աստիճանով և թրաֆիքինգ իրականացնողների կողմից օգտագործվող մեթոդներով: Հետևաբար, նրանք պատասխանատու չեն իրավախախտում կատարելու համար և չպետք է պատասխանատվության ենթարկվեն կատարված ապօրինի գործողությունների համար: Նույն մոտեցումը կիրառելի է այն դեպքերում, երբ գոհը փախել է թրաֆիքինգ իրականացնողներից և կատարված հանցագործությունը նրանց շահագործման կարգավիճակի ուղղակի հետևանք է:

Անպատժելիության սկզբունքի իրավակիրառումը պայմանավորված է ոչ միայն պետության կողմից միջազգային մակարդակով պարտադիր իրավական նորմի ճանաչմամբ ու Եվրոպայի Խորհրդի և Եվրոպական Միության կողմից ընդունված միջոցներով, այլ նաև մարդու իրավունքներին վերաբերող օրենսդրության կիրառմամբ<sup>5</sup>:

<sup>5</sup> Եվրոպայի Խորհրդի «Մարդկանց շահագործման դեմ պայքարի մասին» կոնվենցիա, 2005թ., Վարշավա

***Մարդկանց շահագործման գոհերի կողմից անձր հասարարող կեղծ փաստաթղթերի օգտագործումը դատապարտվել է որպես շահագործման դեպքը հասարարող գործուն***

Մեռական շահագործման նպատակով թրաֆիքինգի ենթարկված անձանց թրաֆիքինգ իրականացնողները հաճախ հարկադրում են օգտագործել անձր հաստատող կեղծ փաստաթղթեր կամ կեղծ անձնագրեր ոստիկանական ստուգումների ժամանակ: Գենտի վերաքննիչ դատարանի մի վճռի շրջանակներում ուսումնասիրվել է հետևյալ իրավիճակը, երբ թրաֆիքինգի ենթարկված անձին հարկադրել են միգրացիոն ծառայությանը ներկայացնել կեղծ փաստաթուղթ և դատարանը գտել է, որ դա հանդիսանում է մարդու շահագործումը հաստատող փաստ:

Բոլոր իրավական համակարգերը պատասխանատվություն են նախատեսում հանցագործություն և իրավախախտում կատարած անձանց համար: Սակայն պատասխանատվությունը կարող են կասեցվել/ չկիրառվել երբ այդ անձն ունի ճանաչված պաշտպանություն, գործել է հարկադրանքի ազդեցության տակ կամ չունի համապատասխան կարողություններ:

Մարդկանց շահագործման ենթարկված անձինք սովորաբար իրենց կողմից կատարված գործողությունների համար իրավասու պատասխանատու անձինք են: Նրանց պատասխանատվությունը մարդկանց շահագործման հետ կապված իրավախախտումների համար, սակայն, սահմանափակվում է նրանով, որ նրանց գործողությունների ազատությունը կաշկանդում են թրաֆիքինգ իրականացնողները կամ շահագործման վիճակում գտնվելը:

Մարդկանց շահագործման ենթարկված անձի խոցելի վիճակն ավելի է վատթարանում, երբ պետությունն այդ անձին չի կարողանում նույնացնել որպես թրաֆիքինգի զոհ և արդյունքում թրաֆիքինգի զոհերը կարող են զրկվել անվտանգություն և օգնություն ստանալու իրենց իրավունքից ու փոխարենը դիտվել որպես հանցագործ: Պետություններն ունեն պարտավորություն՝ որակավորված և վերապատրաստված մասնագետների ջանքերով նույնացնել մարդկանց շահագործման ենթարկված անձանց և գնահատել նրանց կարիքները <sup>6</sup>: Նույնացումը շատ կարևոր է, քանի որ եթե այն տեղի չի ունենում, թրաֆիքինգի զոհերին չի տրամադրվում աջակցություն և նրանց վերաբերվում են որպես կասկածյալների: Հետևաբար, պետությունները պետք է տեղերում ունենան թրաֆիքինգի զոհերին ճիշտ նույնացնելու մեխանիզմներ և ընթացակարգեր, որպեսզի նրանք արագ նույնացվեն որպես զոհեր և ստանան իրենց կարիքներին ու իրավունքներին համապատասխան աջակցություն: Այդպիսի իրավունքներից մեկն այն է, որ թրաֆիքինգի զոհերը չպետք է պատժվեն այն հանցագործությունների համար, որոնք կատարվել են շահագործման ենթարկվելու արդյունքում:

<sup>6</sup> Աջակցության և պաշտպանության դրոյթների համար տես ՄԱԿ-ի 2000թ.-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի» կոնվենցիան և այն լրացնող երկու արձանագրությունները. «Մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին և Ցամաքով, Ծովով ու օդով միգրանտների անօրինական ներս բերելու դեմ» արձանագրություն

## ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Պետությունները պետք է երաշխավորեն թրաֆիքինգի գոհերի անպատժելիությունն այն հանցագործությունների համար, որոնք կատարվել են շահագործման ենթարկվելու ժամանակ կամ որպես շահագործման հետևանք: Թրաֆիքինգը կարգավորող հիմնական բազմակողմ իրավական փաստաթուղթը ՄԱԿ-ի 2000 թվականի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի» կոնվենցիան է և այն լրացնող «Մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» արձանագրությունը<sup>7</sup>: Այս փաստաթուղթն ուղղակիորեն չի մատնանշում թրաֆիքինգի գոհերի անպատժելիությունը: Սակայն, Արձանագրության 2-րդ հոդվածի «բ» կետի համաձայն՝ Արձանագրության նպատակներից մեկը «թրաֆիքինգի գոհերին աջակցություն և պաշտպանություն տրամադրելն է՝ լիարժեք հարգելով մարդու իրավունքները»: Մարդկանց շահագործման դեմ պայքարի արձանագրության կիրարկման համար անդամ պետություններին աջակցելու և խորհուրդներ ներկայացնելու գործառույթով օժտված Թրաֆիքինգի հարցերով աշխատանքային խումբը իր մանդատի շրջանակներում նախատեսել է, որ՝

«Մարդկանց թրաֆիքինգի գոհերի անպատժելիության ապահովման համար անդամ պետությունները պետք է (ա) ստեղծեն թրաֆիքինգի գոհերի նույնացման և նրանց համապատասխան աջակցության տրամադրման պատշաճ մեխանիզմներ, (բ) ազգային օրենսդրությամբ նախատեսեն թրաֆիքինգի գոհերի անպատժելիության սկզբունքի կիրառումն այն հանցագործությունների համար, որոնք նրանք հարկադրված են եղել կատարել շահագործման ենթարկվելու ժամանակաշրջանում<sup>8</sup>»:

2010 թվականին աշխատանքային խումբը կրկին հաստատել է վերոհիշյալ առաջարկը և դիմել է անդամ պետություններին հետևյալ առաջարկով՝ երաշխավորելու, որ «թրաֆիքինգի ենթարկված անձանց անպատժելիությունը և չհետապնդումն ամրագրվեն ազգային օրենսդրությամբ, ուղեցույցներում, կարգերում կամ այլ ակտերում: Սա իրականացնելու համար անդամ պետությունները կարող են օգտվել տեխնիկական աջակցության գործիքներից, ինչպիսիք են օրինակ ՄԱԿ-ի Թրաֆիքինգի դեմ պայքարի մոդելային օրենքի սկզբունքներն ու դրույթները, Մարդու իրավունքների և մարդու շահագործման հարցերով ՄԱԿ-ի մարդու իրավունքների հատուկ հանձնակատարի ուղեցույցները, ինչպես նաև մի շարք այլ չափանիշներ և ուղեցույցներ:<sup>9</sup>

Ավելին, 2010 թվականին կայացած աշխատանքային խմբի հանդիպման ժամանակ Քարտուղարության կողմից պատրաստված փաստաթուղթն այս հարցի առնչությամբ նշում է.

«Մարդկանց թրաֆիքինգի գոհերի իրավունքների պաշտպանության կարևորագույն բաղկացուցիչ մաս պետք է կազմի այն, որ պետությունը չի հետապնդի կամ պատժի թրաֆիքինգի գոհերին թրաֆիքինգի հետ կապված հանցագործությունների համար, ինչպիսիք են օրինակ կեղծ անձնագիր օգտագործելը կամ առանց թույլտվության աշխատանք կատարելը, անգամ եթե նրանք համաձայնություն են տվել կեղծ փաստաթղթերի օգտագործման և առանց թույլտվության աշխատանք կատարելու համար: Նմանապես,

<sup>7</sup> ՄԱԿ, <http://treaties.un.org/Pages/ViewDetails.aspx>

<sup>8</sup> Միավորված Ազգեր, 2009թ. ապրիլին Վիեննայում կայացած թրաֆիքինգի հարցերով աշխատանքային խմբի հանդիպման հաշվետվություն

<sup>9</sup> Միավորված Ազգեր, Եվրոպայի խորհրդի թրաֆիքինգի դեմ պայքարի աշխատանքային խմբի հանդիպում

պետությունը չպետք է հետապնդի կամ պատիժ կիրառի թրաֆիքինգի ենթարկված անձանց նկատմամբ այն հանցագործությունների համար, որոնք նրանք կատարել են շահագործման ենթարկվելու արդյունքում<sup>10</sup>»

Պալերմոյի արձանագրության ընդունումից հետո անպատժելիության սկզբունքի կիրառման պարտավորությունն ամրագրվել է մի քանի փաստաթղթերում: Եվրոպայի Խորհրդի «Թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին» կոնվենցիայի հոդված 26-ը ամրագրում է.

«Յուրաքանչյուր կողմ, ելնելով իր իրավական համակարգի հիմնական սկզբունքներից, պետք է նախատեսի զոհերի նկատմամբ նրանց անօրինական գործողությունների համար պատիժ չկիրառելու հնարավորություն այն դեպքում, երբ նրանց նկատմամբ հարկադրանք է գործադրվել այդպիսի վարքագիծ դրսևորելու համար<sup>11</sup>»:

ԵԱՀԿ Թրաֆիքինգի հարցերով հատուկ ներկայացուցիչը կողմ է այն տեսակետին, որ անպատժելիության սկզբունքը պետք է մեկնաբանվի մարդկանց շահագործման բովանդակության լույսի ներքո, հասկապես երբ խոսքը գնում է հարկադրանքի մասին: Հարկադրանքի բազմակողմանի հասկացությունը ներառում է թրաֆիքինգի բոլոր միջոցները. սպառնալիքը/ ուժի կիրառումը, պարտադրանքի այլ ձևերը, սոսնսգումը, խարդախությունը, խաբեությունը, իշխանության չարաշահումը կամ վիճակի խոցելիության օգտագործումը: Այսպիսով, հանցագործություն կատարելու «հարկադրումը» ներառում է փաստական հանգամանքների ամբողջ զանգվածը, երբ թրաֆիքինգի զոհը կորցնում է ազատ գործելու հնարավորությունը՝ ոչ միայն ֆիզիկական կամ հոգեբանական բռնության սպառնալիքի տակ, այլ նաև տարածված սցենարների համաձայն, երբ թրաֆիքինգ իրականացնողները շահագործում են զոհերին՝ օգտվելով նրանց խոցելիությունից:

Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի հոդված 26-ը սահմանում է հստակ պարտավորություն անդամ երկրների համար՝ անպատժելիության սկզբունքի կիրառման հնարավորության վերաբերյալ: Անդամ երկրները կարող են թույլ տալ որոշ ճկունություն, քանի որ հոդվածը չի պարտավորեցնում երկրներին չկիրառել տուգանքներ: Այն բացատրվում է կոնվենցիան ուղեկցող բացատրական հաշվետվությունում, որի 274-րդ կետում նշված է, որ.

«Ի կատարումն հոդված 26-ով սահմանված պարտավորության, յուրաքանչյուր կողմ, ելնելով իր իրավական համակարգի հիմնական սկզբունքներից, պետք է իր քրեական կամ քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսի այնպիսի դրույթներ կամ միջոցներ, որոնք թույլ են տալիս զոհերի նկատմամբ նրանց ապօրինի գործողությունների համար պատիժ չկիրառելու հնարավորություն, եթե բավարարվել են վերը նշված իրավական պահանջները<sup>12</sup>»:

ԵԱՀԿ Հատուկ ներկայացուցիչը կիսում է այն կարծիքը, որ պետությունները պարտավոր են զերծ պահել թրաֆիքինգի զոհերին պատժից, երբ նրանց կողմից կատարված հանցագործությունն ուղակիորեն կապված է նրանց շահագործման վիճակում գտնվելու հետ, և երկրները, ազգային իրավական համակարգին համապատասխան, ունեն հայեցողության հնարավորություն անպատժելիության սկզբունքի իրականացման վերաբերյալ: Ավելին, Հատուկ

<sup>10</sup> ՄԱԿ-ի Մարդկանց թրաֆիքինգի հարցերով աշխատանքային խումբ. Մարդկանց շահագործման զոհերի պատժելիության և հետապնդման չկիրառումը, թրաֆիքինգի ժամանակ կատարված հանցագործությունների համար վարչական և դատական մոտեցումները, 2009թ., 9 դեկտեմբերի

<sup>11</sup> Եվրոպայի Խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին կոնվենցիա, 2005թ., Վարշավա

<sup>12</sup> Եվրոպայի Խորհրդի Նախարարների Խորհուրդ, ԵԲ-ի կոնվենցիայի պարզաբանական ցեկույց, 2005թ., մայիսի 5

ներկայացուցիչը գտնում է, որ անպատժելիության սկզբունքը ներառում է ոչ միայն թրաֆիքինգի գոհերի նկատմամբ պատժի չկիրառումը, այլ նաև նրանց՝ քրեական հետապնդումից և դատապարտումից զերծ պահելը:

***Թրաֆիքինգի ենթարկված անձը հարկադրվել է օգտագործել կեղծ անձնագիր***

Նիգերիացի երիտասարդ մի կին ներգրավվել է մարմնավաճառության մեջ Բելգիայում, նրան շահագործման ենթարկողը հարկադրել է օգտագործել կեղծ անձնագիր՝ կացության թույլտվություն ստանալու համար: Թեև Բրյուսելի դատարանի կողմից այս կինը ճանաչվեց որպես թրաֆիքինգի գոհ, հետագայում Անտվերպեն քաղաքում նրան հետապնդել և մեղադրել են կեղծ անձնագիր օգտագործելու մեջ, որին դատարանը տեղյակ չի եղել նախորդ դատարանի որոշման մասին: Վերաքննիչ դատարանում գոհը, իսկ հետո նաև դատախազը հաստատեցին հիմնավորման առկայությունը, այսինքն այն, որ գոհը ազատ չի եղել իր գործողությունների մեջ, և որ շահագործողն է հարկադրել նրան օգտագործել այդ կեղծ անձնագիրը: Դատարանի որոշմամբ այդ անձը ճանաչվեց անմեղ, քանի որ նրան բռնության կիրառմամբ էին հարկադրել կատարել այդ հանցագործությունը:

Եվրոպայի Խորհրդի «Թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին» կոնվենցիայի կիրառման նկատմամբ մշտադիտարկում իրականացնող փորձագիտական խումբը՝ ԳԲԵՏԱ-ն՝ հողված 26-ը մեկնաբանել է հետևյալ կերպ.

«Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի հողված 26-ը՝ պարզաբանող զեկույցի հետ համատեղ կողմերի համար սահմանում է պարտավորություն՝ իրականացնել միջոցներ թրաֆիքինգի գոհերի նկատմամբ պատիժ չկիրառելու վերաբերյալ: Պարզաբանող զեկույցը նշում է, որ այսպիսի իրավական միջոցներ կարող են հանդիսանալ քրեական կամ քրեական դատավարության օրենսդրության դրույթները կամ այլ միջոցները: Կողմերը դեռ պետք է զարգացնեն ոչ միայն ազգային լիազորված մարմինների կողմից կիրարկվող միջոցները, այլ նաև պետք է ապահովեն հատկապես թրաֆիքինգի գոհերին վերաբերող օրենսդրությունը: Թրաֆիքինգի գոհերի պատժելիությունը հակազդում է ոչ միայն պետությունների պարտավորությանը թրաֆիքինգի գոհերին աջակցություն և պաշտպանություն տրամադրելուն, այլ նաև հիասթափեցնում է թրաֆիքինգի գոհերին իրավապահ մարմինների հետ համագործակցությունից, ինչպես նաև խոչընդոտում է երկրի պարտավորությանը՝ քննելու և դատապարտելու այն անձանց, որոնք պատասխանատու են մարդկանց շահագործում իրականացնելու համար<sup>13</sup>:»

2011 թվականին անպատժելիության սկզբունքի կիրառման պարտավորության ճանաչման միտումն ուժեղացավ ԵՄ-ի «Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի, մարդկանց թրաֆիքինգի գոհերի պաշտպանության» մասին Հրահանգի ընդունմամբ<sup>14</sup>: Այս Հրահանգով ամրագրված մոտեցումն ավելի լայն է, քան Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայով նախատեսվածը. Հրահանգն ուղղակիորեն ձևակերպում է պատժի չկիրառման մասին պարտավորությունն : Հրահանգի հողված 8-ն ամրագրում է.

<sup>13</sup> Եվրոպայի Խորհուրդ, ԵԽ-ի կոնվենցիայի անդամ պետությունների 7-րդ հանդիպում, 2011թ., հունվարի 30, Ստրասբուրգ

<sup>14</sup> ԵՄ, Եվրոպայի Պառլամենտի թիվ 2011/36/ԵՄ հռչակագիրը և ԵԽ-ի 2011թ. ապրիլի 5-ի հռչակագիրը՝ թրաֆիքինգի դեմ պայքարի և թրաֆիքինգի գոհերի պաշտպանության մասին



«ԵՄ անդամ պետություններն իրենց իրավական համակարգերի հիմնարար սկզբունքների համաձայն պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ ապահովելու, որպեսզի իրավասու պետական մարմինները կարողանան հրաժարվել մարդկանց թրաֆիքինգի զոհերի քրեական հետապնդումից և նրանց ազատել կատարած հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից, եթե այդ հանցագործության կատարումը պայմանավորված է սույն Հրահանգի 2-րդ հոդվածում թվարկված գործողությունների անմիջական հետևանքով:»

Հրահանգի մեկնաբանությունն անպատժելիության սկզբունքի շրջանակը և նպատակը բացատրում է նաև հետևյալով.

«Մարդկանց թրաֆիքինգի զոհերը՝ անդամ պետությունների իրավական համակարգերի հիմնարար սկզբունքների համաձայն, պետք է պաշտպանված լինեն քրեական հետապնդումից կամ քրեական պատասխանատվությունից այնպիսի հանցավոր գործողությունների համար, ինչպիսիք են, օրինակ, կեղծ փաստաթղթերի օգտագործումը կամ մարմնավաճառության կամ միգրացիոն խնդիրների հետ կապված հանցագործությունների կատարումը՝ նրանց շահագործման կարգավիճակում գտնվելու պայմաններում: Այսպիսի պաշտպանության նպատակը մարդկանց թրաֆիքինգի զոհերի մարդու իրավունքների պաշտպանությունն է՝ հետագա կրկնազոհացումից խուսափելու կամ հանցագործների դեմ դատարաններում ցուցմունք և վկայություն տալը խրախուսելու համար:<sup>15</sup>»

Անպատժելիության սկզբունքն ամրագրվել է մի շարք փաստաթղթերում, որոնք ընդունվել են միջազգային օրենսդրության այլ ոլորտներում: Կրկին անգամ, սկզբունքի հիմնավորումը կայանում է նրանում, որ տվյալ անձը որոշակիորեն հարկադրանքի տակ է, որի պատճառով սահմանափակված է նրա գործելու ազատությունը, ուստի նրան չպետք է ենթարկել քրեական պատասխանատվության: Փախստականների կարգավիճակի մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի հոդված 31.1 ամրագրում է, որ.

«անդամ պետությունները չպետք է տուգանքներ կիրառեն այն փախստականների նկատմամբ, ովքեր անօրինական մուտք են գործել կամ գտնվում են երկրում, ուր եկել են այն տարածքից, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը վտանգված է եղել, և ովքեր մուտք են գործել կամ գտնվում են իրենց տարածքում առանց թույլտվության, առավել ևս այն դեպքում, երբ այդ անձինք անհապաղ ներկայացել են իշխանություններին և ներկայացրել իրենց ապօրինի մուտքի կամ երկրում գնվելու հիմնավոր պատճառներ՝ <sup>16</sup>»:

---

<sup>15</sup> ԵՄ, կետ 14

<sup>16</sup> Փախստականների կարգավիճակի վերաբերյալ ՄԱԿ-ի կոնվենցիան, 1951թ., հուլիսի 28, Ժնև

## ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Վերջին տասնամյակում մարդկանց թրաֆիքինգի գոհերի անպատժելիության և քրեորեն չհետապնդելու սկզբունքը ճանաչվել է մի քանի երկրների օրենսդրություններով: Այդ փաստաթղթերը շեշտում են, որ մարդկանց թրաֆիքինգի գոհերի մարդու իրավունքները պետք է գտնվեն թրաֆիքինգի դեմ պայքարի կենտրոնում:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից ընդունված «Մարդկանց թրաֆիքինգի և մարդու իրավունքների Սկզբունքների և Ուղեցույցի»<sup>17</sup> հոդված 7-ի համաձայն.

«Մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձինք չպետք է ձերբակալվեն, պատասխանատվության ենթարկվեն կամ հետապնդվեն նրանց երկիր անօրինական մուտք գործելու կամ տարանցիկ կամ մուտքի երկրներում բնակվելու համար կամ անօրինական գործողությունների մեջ նրանց ներգրավման համար, եթե դա ուղղակիորեն տեղի է ունեցել շահագործման ենթարկվելու հետևանքով:»

Այս սկզբունքը տարբեր մեկնաբանություններով կրկնվել է չորս անգամ դրա կիրարկման բացահայտմանն ուղղված ուղեցույցներում<sup>18</sup>: Պատժից ազատելու համար պարտադիր պայման է, որ մեծահասակների անօրինական գործողությունները հանդիսանան<sup>19</sup> շահագործման «անմիջական հետևանք», ինչից հետևում է, որ հնարավոր են այնպիսի դեպքեր, երբ թրաֆիքինգի ենթարկված անձը չազատվի պատժից՝ իր կողմից կատարված գործողությունների համար: Չժխտելով ապօրինի գործողության հակաօրինական լինելու փաստը, հարկ է ղեկավարվել այն հանգամանքով, որ այդ արարքը կատարած անձը հանդիսանում է թրաֆիքինգի գոհ:

### ***Մարդկանց թրաֆիքինգի ենթարկված աշխատողներ, որոնք օգտագործել են կեղծ փաստաթղթեր***

Մեքենաների ավտոլվացման սեկտորի աշխատողների շրջանում բազմակողմանի ուսումնասիրության ժամանակ Բելգիայի իրավապահ մարմինների աշխատակիցները բացահայտել են աշխատանքային շահագործման դեպք: Աշխատողներն օգտագործում էին անձը հաստատող կեղծ փաստաթղթեր և աշխատանքային կեղծ պայմանագրեր, նրանք ապրում և աշխատում էին նվաստացուցիչ պայմաններում և բացարձակ կախվածության մեջ էին գտնվում գործատուներից: Աշխատակիցներից մի քանիսը նույնացվեցին որպես մարդկանց թրաֆիքինգի գոհեր և հետևաբար չենթարկվեցին պատասխանատվության կեղծ փաստաթղթեր օգտագործելու համար: Սակայն, քննության ժամանակ պարզվել էր, որ աշխատակիցներից մեկը դեսպանատուն էր դիմել կեղծ անձնագիր ստանալու համար և կաշառել դեսպանատան աշխատակցին, ինչից ելնելով նա չէր նույնացվել որպես մարդկանց թրաֆիքինգի գոհ: Ավելին, նույն դեպքով թրաֆիքինգի մեկ այլ գոհին կացության կարգավիճակ չէր տրամադրվել, քանի որ նախկինում նա արդեն ստացել էր կացություն կարգավիճակի տրամադրման մերժում: Հետևաբար, նա արտաքսվեց եկրից:

<sup>17</sup> ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար, Մարդկանց թրաֆիքինգի և մարդու իրավունքների Սկզբունքներ և Ուղեցույցներ, ԵՄ 2002/68

<sup>18</sup> Ուղեցույցի թիվ 2.5 կետ

<sup>19</sup> Ուղեցույցի թիվ 8.3 կետ

Անդամ պետությունները պետք է երաշխավորեն, որ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարելու և կանխարգելելու նպատակով ձեռնարկված միջոցներն անբարենպաստ ազդեցություն չթողնեն անձանց իրավունքների և արժանապատվության՝ ներառյալ նրանց տեղաշարժի ազատության վրա<sup>20</sup>: Անպատժելիության սկզբունքը ԵԱՀԿ-ի կողմից ներկայացվել է 2000 թվականից ի վեր՝ Նախարարական Խորհրդի պարտավորությամբ, որի համաձայն պետք է՝

«ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, ներառյալ մարդկանց թրաֆիքինգի քրեականացման օրենսդրության ընդունումը և կիրառումը, ինչպես նաև անհրաժեշտ պատիժների/տուգանքների ընդունումը՝ իրավապահ մարմինների կողմից անհրաժեշտ արդյունավետ արձագանքի և հետապնդման երաշխավորմամբ: Այսպիսի օրենսդրությունը պետք է հաշվի առնի մարդկանց թրաֆիքինգի հիմնախնդրի լուծումը՝ հիմնվելով մարդու իրավունքի վրա և, ամրագրի թրաֆիքինգի գոհերի՝ մարդու իրավունքների պաշտպանության դրույթը՝ երաշխավորելով, որ մարդկանց թրաֆիքինգի գոհերը չեն հետապնդվի թրաֆիքինգի ենթարկված լինելու համար<sup>21</sup>»:

Այս հայտարարությունը կրկնվում է մինչ օրս. Վիլնյուսի Հոչակագրով ԵԱՀԿ Նախարարական Խորհուրդը հաստատել է .

«Մենք ընդունում ենք, որ բավարար միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ երաշխավորելու մարդկանց թրաֆիքինգի նույնացված գոհերի անպատժելիությունը՝ նրանց կողմից անօրինական գործողությունների մեջ ներգրավված լինելու պարագայում, եթե նրանք հարկադրված են եղել կատարել այն<sup>22</sup>»:

Այս սկզբունքը հետագայում ճանաչվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի<sup>23</sup> բանաձևով, Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի և թրաֆիքինգի կանխարգելման Բրյուսելի հոչակագրով<sup>24</sup>, Մարդկանց թրաֆիքինգի սկզբունքների Մայամիի հոչակագրով<sup>25</sup>: Անպատժելիության սկզբունքը ներառվել է նաև ԱՊՀ երկրների Մարդկանց թրաֆիքինգի գոհերին աջակցության տրամադրման մոդելային օրենքում<sup>26</sup>: ԱՊՀ երկրների մոդելային օրենքն ամրագրում է այս դրույթը հոդված 5-ի 3-րդ կետով, որը կոչ է անում մարդկանց թրաֆիքինգի գոհերին ազատել պատասխանատվությունից այն իրավախախտումների համար, որոնք վերջիններս կատարել են թրաֆիքինգի գոհ լինելու հարկադրանքի ներքո<sup>27</sup>: Եվրոպայի Խորհրդի մարդկանց թրաֆիքինգի հարցերով փորձագետների խումբը, ինչպես նաև ՄԱԿ-ի Մարդկանց թրաֆիքինգի հարցերով աշխատանքային խումբը<sup>28</sup> նույնպես կողմ են անպատժելիության սկզբունքի կիրարկմանը<sup>29</sup>: ՄԱԿ-ի մարդկանց թրաֆիքինգի՝ հատկապես

<sup>20</sup> ԵԱՀԿ-ի Մշտական հանձնաժողով, Որոշում թիվ 557/1, Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների պլան

<sup>21</sup> ԵԱՀԿ Նախարարական հանձնաժողով, Որոշում թիվ 1, Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում ԵԱՀԿ-ի դերակատարության բարձրացում

<sup>22</sup> ԵԱՀԿ Նախարարական հանձնաժողով, Մարդկանց թրաֆիքինգի բոլոր տեսակների դեմ պայքարի հոչակագիր, 2011թ. դեկտեմբերի 7

<sup>23</sup> ՄԱԿ, Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված Կանանց և աղջիկների թրաֆիքինգի մասին բանաձև թիվ 55/67

<sup>24</sup> ԵՄ, Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի և թրաֆիքինգի կանխարգելման հարցերով Բրյուսելյան հոչակագիր, 2002թ. նոյեմբերի 29

<sup>25</sup> Մայամիի հոչակագիրը մարդկանց թրաֆիքինգի սկզբունքների մասին, 2005թ. Փետրվարի 10

<sup>26</sup> Մարդկանց թրաֆիքինգի գոհերին աջակցություն տրամադրելու մասին ԱՊՀ մոդելային օրենք

<sup>27</sup> Նույն տեղում

<sup>28</sup> ՄԱԿ, Մարդկանց թրաֆիքինգի հարցերով աշխատանքային խմբի հանդիպում, 2009թ. ապրիլի 14-15, Վիեննա

<sup>29</sup> Եվրոպական Հանձնաժողով, ԳԲԵՏԱ փորձագիտական խմբի կարծիք թիվ 1/2008

կանանց և երեխաների հատուկ զեկուցողը նույնպես կողմնակից է անպատժելիության սկզբունքի կիրառմանն ու թրաֆիքինգի գոհերի արարքների ապաքրեականացմանը<sup>30</sup>:

Միջազգային օրենսդրությամբ ամրագրված անպատժելիության սկզբունքը պետք է գործնականում կիրառվի պետությունների կողմից: Բոլոր պետությունները պարտավոր են երաշխավորել, որ իրենց ազգային օրենսդրությունը համահունչ լինի միջազգային ստանձնած պարտավորությունների հետ՝ տվյալ երկրների իրավական համակարգերի պահանջներից կամ խանգարող հանգամանքներից անկախ: 1969 թվականի Պայմանագրերի մասին Վիեննայի կոնվենցիայի 27-րդ հոդվածը նշում է, որ.

«Պայմանագրի չկատարման հիմնավորում չի կարող լինել անդամ պետության կողմից իր ներքին օրենսդրությունը վկայակոչելու հանգամանքը<sup>31</sup>»:

Եթե կա հակասություն ազգային օրենսդրության և միջազգային պարտավորությունների միջև, ապա վերջինս պարտադիր է անդամ պետության համար: Հետևաբար, Եվրոպայի Խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին կոնվենցիայի<sup>32</sup> անդամ պետությունները՝ այդ փաստաթղթի դրույթներին համահունչ՝ անհրաժեշտության դեպքում միջոցներ են ձեռնարկում անպատժելիության կիրառման երաշխավորման ուղղությամբ՝ ինչպես պահանջվում է կոնվենցիայի 26-րդ հոդվածով:

## **ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԿՋԲՈՒՆՔԸ՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՈՏԵՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՏԱՐԲ**

Մարդկանց թրաֆիքինգի գոհերը մի քանի ծանր հանցագործությունների գոհեր են: Անդամ պետությունները պարտավորություն ունեն աջակցելու այսպիսի անձանց և չպետք է վերաբերվեն նրանց որպես հանցագործների: ՄԱԿ-ի Մարդկանց թրաֆիքինգի և մարդկանց իրավունքների սկզբունքների և ուղեցույցների համաձայն՝ «մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց մարդու իրավունքները պետք է գտնվեն թրաֆիքինգի դեմ պայքարի և թրաֆիքինգի կանխարգելման կենտրոնում և ուղղված լինեն գոհերի պաշտպանությանը և աջակցությանը<sup>33</sup>»: 2005 թվականի Եվրոպայի Խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին կոնվենցիան հստակ սահմանում է, որ «հիմնարար նպատակներն են թրաֆիքինգի գոհերի պաշտպանությունը և թրաֆիքինգի դեմ պայքարը՝ հարգելով գոհերի իրավունքները<sup>34</sup>»: Նախարարների Խորհրդի Պորտոյի հռչակագրի համաձայն, ԵԱՀԿ անդամ պետությունները նույնպես հաստատեցին, որ «Մարդկանց թրաֆիքինգի գոհերի արժանապատվությունը և նրանց իրավունքները պետք է հարգվեն բոլոր ժամանակներում<sup>35</sup>»:

Անպատժելիության սկզբունքը պարտավորեցնում է երկրներին՝ պահանջելով գերծ մնալ թրաֆիքինգի ենթարկված անձանց նկատմամբ որոշ գործողությունների կիրառումից: «Ռանցն Ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի Դաշնության» գործով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների Եվրոպայի

<sup>30</sup> ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով Խորհուրդ, մարդկանց թրաֆիքինգի՝ հատկապես կանանց և աղջիկների հարցերով հատուկ զեկուցողի զեկույց, 2012թ. հունիսի 6

<sup>31</sup> ՄԱԿ, Պայմանագրերի իրավունքների մասին Վիեննայի կոնվենցիա, 1969թ.

<sup>32</sup> ԵԱՀԿ Նախարարական Խորհուրդ, Որոշում թիվ 15/05

<sup>33</sup> ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, 2002թ. մայիսի 20

<sup>34</sup> ԵԽ, Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին կոնվենցիա, 2005թ. Վարչակազմ

<sup>35</sup> ԵԱՀԿ Նախարարական հանձնաժողով, Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին հռչակագիր, 2002թ. դեկտեմբերի 7

կոնվենցիայի 4-րդ հոդվածին համապատասխան նշեց, որ անդամ պետությունների մարդու իրավունքների պարտավորությունները ներառում են ունենալ օրենսդրություն, որն ամրագրում է «...մարդկանց թրաֆիքինգի գոհերի կամ թրաֆիքինգի պոտենցիալ գոհերի իրավունքների արդյունավետ պաշտպանության երաշխավորությունը<sup>36</sup>»: Թրաֆիքինգի գոհերի իրավունքների պաշտպանության այս շեշտադրումն իրականում ցույց է տալիս, որ պարտավորության շրջանակն ընդլայնվում է և որ մարդկանց թրաֆիքինգի գոհերը չեն պատժվում այն հանցագործությունների համար, որոնք ուղղակիորեն հետևանք են մարդկանց թրաֆիքինգի ենթարկված լինելու: Անպատժելիության կիրառման պարտավորությունը վերաբերում է նաև երկրի պարտավորություններին՝ նույնացնելու, պաշտպանելու և աջակցելու թրաֆիքինգի գոհերին<sup>37</sup>, ինչպես նաև անդամ պետության պարտավորությանը՝ թրաֆիքինգի հետաքննությունը ուղղորդելու իրական մեղավորներին հայտնաբերելուն<sup>38</sup>:

Անպատժելիության սկզբունքը կարող է խախտվել ուղղակիորեն և անուղղակիորեն: Անուղղակի բռնությունը առաջանում է երկրի իշխանությունների կողմից թրաֆիքինգի գոհերի նույնացման իրականացման ձախողումից, ինչը, հետևաբար, հանգեցնում է կատարված հանցագործության հանգամանքների ոչ լիարժեք նկարագրմանն ու և քրեական հետապնդմանը: Անպատժելիության սկզբունքի ուղղակի խախտումն առաջանում է այնպիսի իրավիճակներից, երբ երկրի իշխանությունները, որոնք առնչվում են թրաֆիքինգի գոհի կողմից կատարված իրավախախտմանը, «պարտավոր էին իմանալ<sup>39</sup>» անձի՝ որպես թրաֆիքինգի գոհի կարգավիճակի մասին, սակայն համապատասխան կարևորություն չեն տալիս այս հանգամանքին, երբ որոշում են կայացնում գոհի պատասխանատվության մասին:

## **ՆՈՒՅՆԱՑՈՒՄ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ**

Որպեսզի անպատժելիության սկզբունքն արդյունավետ գործի, անհրաժեշտ է, որ չնախաձեռնվեն ո՛չ հետապնդման, և ո՛չ էլ այլ միջոցներն, կամ էլ նախաձեռնման դեպքում այդ միջոցները պետք է անհապաղ դադարեցվեն, եթե պարզվում է, որ իրավախախտումը կատարվել է թրաֆիքինգի ենթարկվելու ժամանակաշրջանում կամ թրաֆիքինգի հետևանքով: Որքան շուտ անձը նույնացվի որպես թրաֆիքինգի գոհ, այդքան շուտ քայլեր կձեռնարկվեն դադարեցնելու պատիժը կամ վարչական միջոցները, որոնք կիրառվում էին իրավախախտում կատարելու համար: Ուստի կարևորվում է, որ լինեն արդյունավետ մեխանիզմներ և գործընթացներ թրաֆիքինգի ենթարկված անձին շուտափույտ նույնացնելու համար: Եթե ձախողվում է թրաֆիքինգի ենթարկված անձին նույնացնելու նախաձեռնությունը, ապա հնարավոր է, որ անձին վերաբերվեն որպես հանցագործի, որը պետք է պատասխանատվություն կրի՝ ներառյալ ապօրինի գործողությունների համար: Հետևաբար, վաղ նույնացումը վճռորոշ դեր է կատարում, և անդամ երկրները պետք է երաշխավորեն, որ թրաֆիքինգի գոհին հանդիպելու հավանականություն ունեցող պետական ծառայողները, օրինակ՝ ոստիկանները, սահմանապահները, սոցիալական ծառայողները և աշխատանքային տեսուչները ստանան համապատասխան գիտելիքներ նույնացում իրականացնելու համար և

<sup>36</sup> ՄԻԵԴ, Ռանցըր ընդդեմ Ռուսաստանի և Կիպրոսի գործը, 2010թ. Հունվարի 7, Ստրասբուրգ

<sup>37</sup> Պարբերություն 285

<sup>38</sup> Պարբերություն 286

<sup>39</sup> Նույն տեղում

համագործակցեն միմյանց հետ<sup>40</sup>: Ավելին, երկրի իշխանություններից պահանջվում է նախաձեռնող լինել՝ մարդկանց թրաֆիքինգի հնարավոր իրավիճակները բացահայտելու համար. անհրաժեշտ է, որպեսզի դատախազը նախաձեռնություն ստանձնի և երաշխավորի, որ անհրաժեշտ հարցումներ կատարվեն՝ պարզելու կասկածանքին և ձերբակալմանը վերաբերող հանգամանքները<sup>41</sup>: ԵԱՀԿ թրաֆիքինգի հարցերով հատուկ ներկայացուցիչը կարծում է, որ թրաֆիքինգի զոհերի նույնացման համար պետք է արդյունավետ կիրառվեն նաև երկրների ազգային ուղղորդման մեխանիզմները: Խիստ կարևոր է նաև, որ դատարանները կարողանան նույնացնել այն դեպքերը, որոնք պարունակում են թրաֆիքինգի նախադրյալներ՝ որպեսզի դատախազներն ուղարկեն համապատասխան հարցումներ զոհերի նույնացման և հանցագործների դատապարտման համար: Այսպիսի դեպքերում անհրաժեշտ է, որ դատարանները շեղեն գործերը քրեական դատավարական համակարգից և զոհերն ուղղորդվեն աջակցություն և վերականգնում ստանալու համար:

Որպեսզի երաշխավորվի թրաֆիքինգի ենթարկված զոհի պատասխանատվության չենթարկվելն այն արարքների/ գործողությունների համար, որոնք կատարվել են հարկադրաբար, թրաֆիքինգի ենթարկվելու ժամանակաշրջանում՝ պետք է զգուշությամբ գնահատվեն դեպքի մանրամասները: Ավելին, երկրից տվյալ անձի հեռացումը պետք է կանխվի և նրանք պետք է ստանան աջակցություն և օգնություն<sup>42</sup>, իրենց կարիքներին համապատասխան, ներառյալ անվճար իրավական խորհրդատվությունը՝ ԵԽ-ի կոնվենցիայի 12.1 կետի համաձայն:

«Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են զոհերի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգնման համար: Այդպիսի օժանդակությունը պետք է ներառի առնվազն ... դ) իրենց հասկանալի լեզվով խորհրդատվության-տեղեկատվության տրամադրում, մասնավորապես իրենց իրավունքների և այն ծառայությունների վերաբերյալ, որոնցից կարող են օգտվել:»

Նույնաբովանդակ պարտավորություն ամրագրված է ԵՄ փաստաթղթերում<sup>43</sup>: ԵԱՀԿ-ի հակաթրաֆիքինգային պարտավորությունները նույնպես կոչ են անում անդամ պետություններին՝ ամրագրել թրաֆիքինգի զոհերի աջակցության սկզբունքը՝ մասնավորապես հասկանալի լեզվով տրամադրվող իրավաբանական աջակցության հասանելիությունը<sup>44</sup>:

<sup>40</sup> ԵԱՀԿ Նախարներիխորհուրդ, Աշխատանքային շահագործման նպատակով մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին թիվ 8/07 Որոշում, 2007թ. Նոյեմբերի 30

<sup>41</sup> Անգլիայի և Ուելսի Վերաքննիչ դատարանի Ռեզինայի գործը, 2008թ.

<sup>42</sup> ԵԽ, Հոդված 10, պարբերություն 10

<sup>43</sup> ԵՄ, Եվրոպայի Պառլամենտի թիվ 2011/36/ԵՄ հռչակագիրը և ԵԽ-ի 2011թ. ապրիլի 5-ի հռչակագիրը՝ թրաֆիքինգի դեմ պայքարի և թրաֆիքինգի զոհերի պաշտպանության մասին

<sup>44</sup> ԵԱՀԿ Նախարներիխորհուրդ, Աշխատանքային շահագործման նպատակով մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին թիվ 8/07 Որոշում, 2007թ. Նոյեմբերի 30

***Մեռական շահագործման ենթարկված աղջիկը վերադարձել է որպես կեղծ փաստաթղթերով անկանոն միգրանտ***

Ռ.-ն ճանապարհորդել էր Շվեյցարիա Արևելյան Եվրոպայից՝ ծանոթի միջոցով: Նրան տրվել էր կեղծ անձնագիր, որտեղ նշում էր նրա 18 տարեկան լինելը: Նրան հարկադրել էին զբաղվել փողոցային մարմնավաճառությամբ՝ օրական 1000 շվեյցարական ֆրանկ տալով իրեն շահագործողներին: Նրանք սպառնում էին սպանել աղջկան, եթե վերջինս հրաժարվի զբաղվել մարմնավաճառությամբ: Ոստիկանական միջոցառման ժամանակ պարզվել էր, որ նրա անձնագիրը կեղծ էր և նշում էր կեղծ տարիք, զրույցի ժամանակ աղջիկը չի պատմել իր պատմությունը և սպասում էր երկրից վտարմանը և այս համատեքստում կալանավորումը կարող էր դիտվել որպես պատիժ: Հասարակական կազմակերպությունն տեղեկանում է այս դեպքի մասին և 40 րոպեով տեսակցելու թույլտվություն է ստանում: Աղջիկը շատ վախեցած էր և չէր ցանկանում խոսել, բայց երբ հասկացավ, որ խորհրդատուն ծանոթ է իր դեպքին և իրավիճակին, խոսեց և օգնություն խնդրեց: Աղջիկը վախենում էր կավատից, որն ապրում էր նրա հայրենիքում՝ իր ընտանիքի հարևանությամբ: ՀԿ-ն փորձեց հետաձգել նրա վտարումը, սակայն չհաջողվեց: Երեք օր անց այդ աղջիկը վտարվեց հայրենիք<sup>45</sup>:

**ՄԿՋԲՈՒՆՔԻ ՇՐՋԱՆԱԿԸ**

Անպատժելիության սկզբունքն ավելի լայն հասկացություն է, քան հետապնդման արգելքը: Գոյություն ունեն այլ եղանակներ, որոնցով թրաֆիքինգի ենթարկված անձը կարող է պատժվել կամ տուգանքի ենթարկվել այն արարքների համար, որոնք նա կատարել է թրաֆիքինգի ենթարկվելու ժամանակ կամ դրա հետևանքով: Իհարկե, կատարված ոչ բոլոր արարքներն են հանցագործություն, կարող են կատարվել այլ իրավախախտումներ: Մարդկանց թրաֆիքինգի գոհերը, հնարավոր է, խախտեն միգրացիոն օրենսդրությունը կամ այլ օրենքներ՝ ապօրինի հատելով սահմանը կամ օգտագործելով կեղծ փաստաթղթեր: Անգամ եթե նրանք երկիր են մուտք գործում օրինական ճանապարհով, հնարավոր է, որ նրանք խախտեն մուտքի կանոնները՝ երկրում մնալու կամ աշխատելու պայմանները, դրանով իսկ խախտելով նաև աշխատելու իրավունքի սկզբունքը: Նրանք կարող են խախտել մարմնավաճառության արգելման հետ կապված օրենսդրությունը կամ այդ խնդիրը կարգավորող այլ օրենքներ: Իրականությունը, սակայն, այլ է. թրաֆիքինգի գոհերը գտնվում են այդ իրավիճակում, քանի որ նրանք շահագործվել են օրենքի խախտմամբ՝ զրկվելով ազատությունից:

ՄԱԿ-ի Պալերմոյի արձանագրության Հոդված 3-ի «ա» կետն ամրագրում է, որ չափահաս անձինք թրաֆիքինգի են ենթարկվում «...ուժի սպառնալիքով կամ դրա կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման, առևանգման, խարդախության, խաբերության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի

<sup>45</sup> Շվեյցարիայի 2012-2014 թվականների մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիրը նշում է գործող մի քանի դրույթների կարևորությունը՝ թրաֆիքինգի գոհերի նույնացման և նրանց պաշտպանության տրամադրման վերաբերյալ: Նշված դեպքով անհասկանալի է, արդյոք կացության թույլտվության դիմումը ներկայացվել էր թե ոչ, և ինչու պատժի չկիրառման սկզբունքը այս պարագայում չի գործել:

համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով<sup>46</sup>:»

### ***Անպարժեխության դատական մեկնաբանությունը***

Վերջին դեպքերից մեկով Մեծ Բրիտանիայի Վերաքննիչ դատարանը մեկնաբանեց ԵԽ կոնվենցիայի հոդված 26-ը, որը կարծես թե հարկադրանքի ավելի լայն մեկնաբանություն է տալիս, քան Անգլիայի ընդհանուր օրենսդրությունը. Հոդված 26-ն օգտագործում է «հարկադրանք» եզրույթն ընդհանուր ձևով, որը հատուկ է միջազգային փաստաթղթերին և չի սահմանափակվում հանգամանքներով, որոնք ամրագրված են Անգլիայի օրենսդրությամբ: Հոդված 26-ը սահմանում է, որ «յուրաքանչյուր կողմ, ելնելով իր իրավական համակարգի հիմնական սկզբունքներից, պետք է նախատեսի գոհերի նկատմամբ նրանց ապօրինի գործողությունների համար պատիժ չկիրառելու հնարավորություն այն դեպքում, երբ նրանց նկատմամբ հարկադրանք է գործադրվել այդպիսի վարքագիծ դրսևորելու համար»:

Մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձինք ոչ միայն վտանգված են անարդար հետապնդման, որի արդյունքում կարող են տուգանքներ վճարել կամ անգամ ազատագրվել, այլև նրանք գտնվում են վարչական կալանքի ենթարկվելու վտանգի տակ կամ էլ կարող է սահմանափակվել նրանց տեղաշարժի ազատությունը(օրինակ, «կացարանում փակի տակ պահելը <sup>47</sup>»): Այսպիսի կալանավորումը կարող է խախտել մարդու իրավունքների օրենսդրության ոլորտում անդամ պետությունների պարտավորությունները : Մարդու իրավունքների Եվրոպայի կոնվենցիայի հոդված 5-ի համաձայն.

«յուրաքանչյուր մարդ ազատության և իր անվտանգության ապահովման իրավունք ունի: Ոչ ոք չի կարող ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

... գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը այն նկատառումով, որ նա կանգնի իրավասու դատական մարմնի առջև հիմնավոր կերպով կասկածվելով իրավազանցություն կատարելու մեջ, կամ այն դեպքում, երբ հիմքեր կան ենթադրելու, որ անհրաժեշտ է կանխել նրա կողմից իրավազանցություն կատարելը կամ այն կատարելուց հետո կանխել նրա թաքնվելը...

... գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:»

Կոնվենցիայի 5-րդ հոդվածն արգելում է կամայական կալանքը: Հոդվածը խրախուսում է ազատ տեղաշարժի հիմնարար իրավունքը՝ տեղաշարժվել երբ և որտեղ անձը ցանկանում է, եթե չկա հիմնավոր պատճառ այն մերժելու համար: Այս ամենի լույսի ներքո, շատ կարևոր է, որպեսզի անդամ պետություններն ունենան գործող պատշաճ մեխանիզմներ մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց ժամանակին և ճիշտ նույնացնելու համար: Հնարավոր է, որ թրաֆիքինգի ենթարկված անձը կատարել է իրավախախտում, որը կարող է հիմք հանդիսանալ նրա կալանավորման համար, կամ էլ նրան նույնացրել են որպես

<sup>46</sup>Stu [http://www.unodc.org/documens.human-trafficking/2012/UNODC\\_2012\\_issue\\_Paper\\_abuse\\_of\\_a\\_position\\_of\\_vulnerability](http://www.unodc.org/documens.human-trafficking/2012/UNODC_2012_issue_Paper_abuse_of_a_position_of_vulnerability)

<sup>47</sup> Այս պրակտիկան խանգարող հանգամանք է համարվում մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց բուժման/վերականգնման ընթացքում:



նպատակակետ երկիր առանց համապատասխան թույլտվության մուտք գործած անձ: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է վերապատրաստել կալանավորված անձնանց պահելու վայրերի աշխատակիցներին, խրախուսել ՀԿ-պետական մարմիններ համագործակցությունը՝ փաստաթուղթ չունեցող թրաֆիքինգի զոհերին նույնացնելու համար, քանի որ հաճախ այս անձինք հայտնվում են այդ վայրերում և վախենում են բացահայտել իրենց շահագործողներին՝ սպանալիքի, պարտքերի, հոգեբանական խնդիրների կամ իշխանությունների նկատմամբ վստահության պակասի պատճառով:

***Սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգի ենթարկված աղջիկը նույնացվել է կալանավայրում՝ միջսահմանային համագործակցության արդյունքում***

Նիգերիացի կանայք կեղծ խոստումներով հավաքագրվել էին և տեղափոխվել էին Բելգիա՝ ենթարկվելով սեռական շահագործման: Թրաֆիքինգի կազմակերպիչները կիրառում էին բռնություն և «վուդու» ծիսակատարություններ կանանց ստրկության վիճակում պահելու համար, հարկադրել էին զբաղվել մարմնավաճառությամբ՝ ճանապարհածախսը վերադարձնելու համար: Բելգիայի ոստիկանությունը՝ քննելով աֆրիկացի կանանց ինտերնետային մարմնավաճառության մեջ ներգրավելու դեպքը, հեռախոսային խոսակցությունը ձայնագրելու միջոցով հայտնաբերեցին, որ զոհերից մեկը ձերբակալվել էր Նիդեռլանդներում կեղծ փաստաթղթերի օգտագործման համար և տեղափոխվել էր անօրինական միգրանտների պահման վայր: Բելգիայի դատական իշխանությունները հարցում էին ուղարկել իրենց գործընկերներին Նիդեռլանդներ՝ զոհին հարցաքննելու նպատակով: Արդյունավետ միջսահմանային համագործակցության արդյունքում նրանք կազմակերպեցին մարդկանց թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված կենտրոնի մասնագետի հանդիպումն այդ աղջկա հետ: Նրան տեղեկացրել էին Բելգիայի ոստիկանության հետ համագործակցելու հնարավորության և զոհի կարգավիճակ շտրիկելու մասին: Միջսահմանային միջգերատեսչական դատախազական, միգրացիոն ծառայությունների, հասարակական կազմակերպությունների միջև արդյունավետ համագործակցության շտրիկվ թրաֆիքինգի ենթարկված կինը տեղափոխվեց Բելգիա և ստացավ համապատասխան աջակցություն թրաֆիքինգի զոհերի կացարանում:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի սկզբունքների և ուղեցույցների<sup>48</sup> առաջարկություններն ուղղակիորեն ուղղված են կալանքին և տեղաշարժի ազատության սահմանափակմանը: Նշված ուղեցույցի 7-րդ սկզբունքը նախատեսում է, որ մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձը չպետք է կալանավորվի այլ երկրում անօրինական կարգավիճակում գտնվելու կամ երկիր մուտք գործելու համար, ինչպես նաև անօրինական գործողությունների մեջ ներգրավվելու համար՝ եթե դրանք կատարվել են թրաֆիքինգի ենթարկվելու արդյունքում: Այնուհետև Ուղեցույցը նշում է.

«Ուղեցույց 1.5 նախատեսում է, որ անդամ պետությունները պետք է պաշտպանեն բոլոր մարդկանց ազատ տեղաշարժի իրավունքը և երաշխավորեն, որ հակաթրաֆիքինգային միջոցները չխախտեն նրանց իրավունքները»:

«Ուղեցույց 2.6 նախատեսում է, որ անդամ պետությունները պետք է երաշխավորեն, որպեսզի մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձը, ոչ մի պարագայում, չպահվի միգրանտներին պահելու վայրում կամ ազատագրկման այլ վայրում:

<sup>48</sup> ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, 2002 թ. մայիսի 20

«Ուղեցույց 4.5 նախատեսում է, որ անդամ պետությունները պետք է երաշխավորեն, որ օրենսդրությունը պաշտպանի մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց հետապնդումից, պատժից կամ կալանավորումից այն անօրինական գործողությունների, կամ երկիր անօրինական մուտք գործելու համար, որոնք կատարվել են թրաֆիքինգի ենթարկվելու հետևանքով»:

«Ուղեցույց 6.1 նախատեսում է, որ մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձինք չպետք է պահվեն միգրացիոն կալանավորման վայրերում կամ այլ ազատագրկման վայրերում կամ թափառաշրջիկների կացարաններում»:

Այս ուղեցույցները պարզ ցույց են տալիս, որ մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձինք պետք է արժանանան այնպիսի վերաբերմունքի, որը հիմնված է նրանց խոցելիության ընկալման վրա, հաշվի առնելով, որ նրանք հանցագործության զոհ են, այլ ոչ թե հանցագործ: Այս մոտեցումը ստացել է օրինական ձևաչափի և ներառվել է ԵԽ կոնվենցիայի և ԵՄ-ի Մարդկանց շահագործման հռչակագրի մեջ:

Ավելին, մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց վրա թրաֆիքինգի թողած հետևանքների բժշկական զննումը ցույց է տալիս, որ կալանավորումը և ազատագրկումը նպաստում են տրավմայի և խոցելիության աստիճանի խորացմանը և կարող են ընդհանուր տրավմայի պատճառ հանդիսանալ, բերելով ինքնասպանության վարքագծի դրսևորման կամ հետտրավմատիկ ստրեսային իրավիճակի: Ուստի մարդկանց թրաֆիքինգի զոհերի ծանր փորձությունն և առողջական խնդիրները ընդգծում են այն փաստի կորևորությունը, որ զոհերը չպետք է կալանավորվեն այն հանցագործությունների համար, որոնք կատարել են մարդկանց թրաֆիքինգի ենթարկվելու հետևանքով<sup>49</sup>:

Մարդկանց թրաֆիքինգի զոհերը խոցելի են նաև այլ սանկցիաների և պատիժների կիրառման նկատմամբ, ներառյալ երկիր կրկին անգամ մուտք գործելու արգելքը կամ անգամ հարկադիր հայրենադարձության իրականացումը: Հարկադիր հայրենադարձությունը կարող է խախտել չվերադարձնելու սկզբունքը (non-refoulement)՝ ելնելով մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձի նկատմամբ ստանձնած միջազգային պարտավորություններից, միայն այն դեպքում, եթե թրաֆիքինգի զոհը փախստական է<sup>50</sup>, կամ եթե նրանց տրամադրվում է ամբողջական և մասնակի պաշտպանություն<sup>51</sup>:

Մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձինք կարող են պատասխանատվության ենթարկվել, քանի որ նրանք ի վիճակի չեն կամ ցանկություն չունեն համագործակցելու իշխանությունների հետ քննության ընթացքում՝ թրաֆիքինգի կազմակերպիչներին պատասխանատվության ենթարկելու համար: Որոշ դեպքերում թրաֆիքինգի ենթարկված անձինք կարող են կրկնակի անգամ ենթարկվել պատասխանատվության՝ նախկինում նրանց կատարած քրեական կամ վարչական իրավախախտումների համար, անգամ եթե համագործակցել են իշխանությունների հետ քննության ընթացքում: Այսպիսի օրինակները վերաբերում են այն դեպքերին, երբ թրաֆիքինգի ենթարկված անձինք ստանում են վտարման ենթարկվելու մասին ծանուցագիր որպես անօրինական միգրանտներ կամ երբ նրանք կատարել են թրաֆիքինգի հետ կապված իրավախախտումներ: Այս տուգանքների արդյունքում թրաֆիքինգի զոհերը կարող են ունենալ վարչական կամ քրեական

<sup>49</sup> ԵԱՀԿ Մարդկանց թրաֆիքինգի հարցերով հատուկ ներկայացուցիչ՝ Բոլտցմանի մարդու իրավունքների համալսարանի հետ համագործակցությամբ, 2013 թ.

<sup>50</sup> ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար, 2006 թ., ապրիլի 7

<sup>51</sup> Կանոնակարգվում է Եվրոպայի հռչակագրով թիվ 2004/ 83

դատվածություն՝ երկարատև բացասական հետևանքներով: Օրինակ, այս վարչական կամ քրեական դատվածությունները կարող են արգելք հանդիսանալ թրաֆիքինգի գոհերի համար՝ կացության կարգավիճակ ստանալու կամ այդ կարգավիճակը երկարացնելու համար, կամ ազդել հետագայում թրաֆիքինգի գոհի ճանապարհորդելու վրա<sup>52</sup>: Ավելին, դատվածությունները կարող են բերել լուրջ հետևանքների, երբ թրաֆիքինգի ենթարկված անձինք վերադառնում են հայրենիք, օրինակ՝ ունենալով դատվածություն թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների համար, այն պարագայում, երբ որոշ երկրներում այդ արարքի համար նրանք կարող են դատապարտվել մահապատժի:

### *Խանութից գողություններ կարարելով շահագործված կին*

Նիդեռլանդներում ձերբակալվել էր մոնդոլ երիտասարդ կին՝ խանութից գողություն կատարելու համար: Հարցաքննության ժամանակ նա հայտարարեց, որ նրան հարկադրել են դա անել, սակայն հայտնեց այնքան անբավարար տեղեկատվություն գողություն կատարելուն հարկադրող անձի մասին, որ ոստիկանությունը չէր կարող գործողություններ նախաձեռնել, և այդ կինը ստիպված էր տուգանք վճարել կատարված գողության համար: Քանի որ կինն ապօրինի էր ապրում Նիդեռլանդներում, նրան պատրաստվում էին վտարել երկրից: Վերադարձի Ծառայության աշխատակիցները՝ մոնդոլ կնոջ հետ հարցազրույցի ժամանակ հայտնաբերեցին թրաֆիքինգի հատկանիշներ: Երբ ծառայության աշխատակիցները համառոտ էին հարցաքննության վրա, պարզվեց, որ մի քրեական խմբավորում ստիպում էր այդ կնոջը զբաղվել մարմնավաճառությամբ և գողությամբ Նիդեռլանդներում: Ի վերջո կինը նույնացվեց որպես թրաֆիքինգի գոհ: Նրան տրամադրեցին ժամանակավոր կացության կարգավիճակ, որը նախատեսված էր թրաֆիքինգի գոհերի համար: Գողության համար դատապարտված լինելու պատճառով, սակայն, նրա կացության կարգավիճակը չերկարացվեց: Իսկ թրաֆիքինգ իրականացնողների մասով հարուցված քրեական գործն այս պահին դեռ շարունակվում է:

## **ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԿՋԲՈՒՆՔԻ ՇՐՋԱՆԱԿԸ՝ ԵՐԵՆԱՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՊԹԵՐՈՎ**

Չարաշահումների, շահագործման և թրաֆիքինգի տեսանկյունից երեխաներն առավել խոցելի են<sup>53</sup>: Նրանց խոցելիությունը պայմանավորված է հատկապես նրանց տարիքով: Նրանք ունեն հատուկ կարիքներ և իրավունքներ, ներառյալ՝ պաշտպանությունն այլ անձանցից, հոգածության և կրթության կարիքներ և այլն: Թեև տարբեր երկրներում քրեական պատասխանատվության ենթարկման տարիքը տարբեր է, այդուհանդերձ պետություններն ունեն հատուկ պարտավորություններ միջազգային օրենսդրության առջև 18 տարեկանից ցածր անձանց նկատմամբ: ՄԱԿ-ի մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի սկզբունքների և ուղեցույցի թիվ 10 Սկզբունքի համաձայն.

«Թրաֆիքինգի գոհ հանդիսացող երեխաները պետք է նույնացվեն որպես այդպիսիք: Նրանց լավագույն շահերը պետք է միշտ կարևորվեն: Թրաֆիքինգի ենթարկված երեխաները պետք է ստանան համապատասխան աջակցություն և պաշտպանություն: Ամբողջությամբ պետք է հաշվի առնել նրանց հատուկ խոցելիությունը, իրավունքներն ու կարիքները:»

<sup>52</sup> Այս խնդրի քննարկման համար տես Հոլանդիայի թրաֆիքինգի հատուկ զեկուցողի զեկույցը, 2010թ.

<sup>53</sup> Եվրոպայում թրաֆիքինգի ենթարկված երեխաների իրավունքների պաշտպանության ուղեցույց, 2006թ., Ժնև

Ուղեցույց 8.2 խորհուրդ է տալիս ունենալ թրաֆիքինգի ենթարկված երեխաների արագ նույնացման ընթացակարգեր: Ուղեցույց 8.3 կրկնում է դրույթն առ այն, որ քրեական պատասխանատվության չպետք է ենթարկել թրաֆիքինգի զոհերին՝ հատկապես երեխաներին:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Թրաֆիքինգի զոհ երեխաների իրավունքների պաշտպանության ուղեցույցը նույնպես պարտավորեցնում է պետություններին՝ չհետապնդել որևէ երեխայի, ում թրաֆիքինգի ենթարկվելու ժամանակ հարկադրել են կատարել իրավախախտում կամ հանցագործություն:

«Դատական մարմինները պետք է երաշխավորեն, որպեսզի թրաֆիքինգի ենթարկված երեխաները չենթարկվեն քրեական պատասխանատվության այն հանցագործությունների համար, որոնք կատարել են թրաֆիքինգի ենթարկվելու ժամանակ՝ ներառյալ միգրացիոն օրենսդրության խախտումների համար<sup>54</sup>»:

ՄԱԿ-ի «Հանցագործության զոհ և վկա երեխայի մասնակցությամբ արդարադատության վերաբերյալ» ուղեցույցը բնորոշում է երեխա զոհերին և վկաներին որպես «երեխաներ և 18 տարեկանից ցածր անձինք, ովքեր հանդիսանում են հանցագործության զոհ կամ հանցագործության վկա՝ անկախ հանցագործության մեջ նրանց դերակատարումից կամ ենթադրյալ հանցագործի կամ հանցագործերի խմբի հետապնդումից<sup>55</sup>»: ՄԱԿ-ի Ուղեցույցն այնուհետև նշում է, որ «զոհ և վկա երեխաները կարող են ենթարկվել լրացուցիչ զրկանքների, եթե սխալմամբ դիտարկվեն որպես հանցագործներ՝ իրականում հանդիսանալով զոհեր և վկաներ<sup>56</sup>»: Ուղեցույցը շեշտում է, որ անհրաժեշտ է երաշխավորել, որպեսզի զոհ և վկա երեխաներին վերաբերվեն հոգատար և զգայուն ձևով, արժանապատվությամբ և կարեկցանքով, ու տրամադրեն միջազգային չափանիշներին համապատասխան պաշտպանություն: Ելնելով Ուղեցույցից՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամն առաջ է քաշում այն փաստը, որ շահագործման կամ թրաֆիքինգի ենթարկված երեխաներն իրավունք ունեն ստանալու պաշտպանություն «այն սանկցիաների և հանցագործությունների համար, որոնք կատարել է թրաֆիքինգի ենթարկվելու ժամանակաշրջանում: Այս սկզբունքը պետք է կիրառվի անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի՞ դերակատարում նրանք ունեին կատարված հանցագործության համատեքստում և թե ե՞րբ է այն տեղի ունենցել, դատական գործընթացների արդյունքներից անկախ, և այլն<sup>57</sup>»: Երեխաների հատուկ խոցելիությունն ու երեխաների կարգավիճակը ներառված են Պալերմոյի Արձանագրության և Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի սահմանումներում, որտեղ հավաքագրումը, տեղափոխումը, փոխանցումը, թաքցումը կամ ստացումն իրականացվել էր շահագործման նպատակով և զոհը 18 տարեկանից ցածր երեխա է<sup>58</sup>:

Հետևաբար երեխային որպես թրաֆիքինգի զոհ նույնացնելու համար անհրաժեշտ չէ երեխաների նկատմամբ հարկադրանքի որևէ միջոցի կիրառումը, ներառյալ՝ հարկադրանքը, խաբեությունը կամ սպառնալիքը՝: Երեխաները չեն կարող օրենքով համաձայնություն տալ թրաֆիքինգի ենթարկվելու համար և ոչ էլ թրաֆիքինգի ենթարկված անձինք են իրավասու

<sup>54</sup> ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Թրաֆիքինգի զոհ երեխաների իրավունքների պաշտպանության ուղեցույց, 2006թ., սեպտեմբեր

<sup>55</sup> ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողով, 2005/20

<sup>56</sup> Տես կետ 7

<sup>57</sup> ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Երեխաների թրաֆիքինգ սկանդինավյան երկրներում, զեկույց 2012թ., մայիս

<sup>58</sup> ՄԱԿ-ի Մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին արձանագրություն, 2000թ., նոյեմբեր

համաձայնություն տալ շահագործվելու համար: «Անգամ եթե երեխայի նկատմամբ չի կիրառվել սպառնալիք, հարկադրանք, ուժ կամ խաբեություն, կամ նա չի առևանգվել, միևնույն է, երեխան չի կարող համաձայնություն տալ շահագործման նպատակով թրաֆիքինգի գործողությունների համար<sup>59</sup>»: ԵՄ-ի հոչակագիրը նույնպես կրկնում է այս մոտեցման կարևորությունը. «Երբ խոսքը վերաբերում է երեխային, որևէ հնարավոր համաձայնության առկայություն չպետք է համարվի իրավագործ<sup>60</sup>:» Հետևաբար, երբ կիրառվում է անպատժելիության սկզբունքը երեխաների նկատմամբ, պետությունները պետք է ընդունեն «հարկադրանք» բառի լայն, ոչ բառացի մեկնաբանությունը, որը նշվում է ԵԽ կոնվենցիայի հոդված 26-ում և ԵՄ հոչակագրի հոդված 8-ում: Սա կարող է հարց առաջացնել, արդյո՞ք երեխայի կողմից կատարված իրավախախտումը վերաբերում է թրաֆիքինգին, թե՛ ոչ: Այն դեպքերում, երբ պատճառական կապն առկա է, հետապնդումը պետք է դադարեցվի վաղ շրջանում կամ բողոքարկվի մեղադրանքը:

ԵԱՀԿ Հատուկ ներկայացուցչի կարծիքով երեխաների թրաֆիքինգի դեպքում անհրաժեշտ է հարկադրանքի կիրառման խնդիրն ընկալել երեխայի խոցելիության և նրա համաձայնության անկարևորության լույսի ներքո: Ավելի կոնկրետ, եթե առկա են երեխայի չարաշահման, և/ կամ շահագործման, և/ կամ թրաֆիքինգի մասին վկայություններ, իրավական տեսանկյունից պետք է հասկանալ, որ այս իրավիճակում երեխան չունի ինքնուրույնություն/ կամաարտահայտություն, ազատ չէ կայացնելու հստակ կամ գիտակցված որոշումներ, օրինակ՝ փախուստի կամ այլընտրանքային այլ միջոցներ իրականացնելու հնարավորություն: Հետևաբար, երբ երեխան շահագործվում և/ կամ թրաֆիքինգի է ենթարկվում, կամ օգտագործվում է թրաֆիքինգ իրականացնողի կողմից անօրինական գործողությունների համար, կամ եթե երեխան կատարել է իրավախախտում, կարևոր է անվերապահորեն կիրարկել անպատժելիության սկզբունքը: Սա կարևոր է ո՛չ միայն երեխայի պաշտպանության, այլ նաև պետության կողմից երեխային կրկնակի տրավմայի ենթարկելու վտանգի տեսանկյունից:

Քանի որ երեխայի համաձայնությունը իրավական առումով որևէ նշանակություն չունի, ապա իրավապահ մարմինները չպետք է պարզաբանեն երեխայի համաձայնությունը շահագործվելու վերաբերյալ: Ուստի, քննության ժամանակ ձեռք բերված տեղեկությունները, որոնք իշխանությունը կարող է օգտագործել երեխայի դեմ դատական գործընթացի ժամանակ, կամ զոհ երեխայի լուրջների ժամանակ, առհասարակ չեն կարող օգտագործվել երեխայի դեմ՝ նրան պատասխանատվության ենթարկելու համար: Թրաֆիքինգի ենթարկվելու հետևանքով ապօրինի գործողություններ կատարելու՝ երեխայի համաձայնությունը չի կարող զրկել երեխային՝ թրաֆիքինգի զոհ լինելու կարգավիճակից<sup>61</sup>:

Երեխաները թրաֆիքինգի են ենթարկվում շահագործման տարբեր նպատակներով, որոնցից մի քանիսի դեպքում, սակայն, կարող են երեխա զոհին ենթարկել քրեական պատասխանատվության՝ կախված տվյալ երկրի քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքից: Երբ թրաֆիքինգի է ենթարկվում երեխան, և նա թրաֆիքինգ իրականացնողի կողմից ներգրավվում է անօրինական գործողությունների կատարման մեջ, կամ էլ եթե երեխան ինքն է կատարում հանցագործություն, որը պայմանավորված է նրա

<sup>59</sup> ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործությունների դեմ պայքարի գրասենյակ, Մարդկանց թրաֆիքինգ, զեկույց, 2009թ., Վիեննա

<sup>60</sup> ԵՄ հոչակագիր, 2011/36/ԵՄ

<sup>61</sup> ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ, Թրաֆիքինգի երեխա զոհերի պաշտպանության ուղեցույց, 2006թ., սեպտեմբեր

թրաֆիքինգի ենթարկվելու վիճակով, պետք է կիրառվի անպատժելիության սկզբունքը՝ երեխայի հետագա զոհացումից խուսափելու համար: Այն դեպքերում, երբ հանգամանքները պարզ չեն և կասկածներ կան հանցագործության և երեխայի թրաֆիքինգի իրավիճակի փոխկապակցվածության միջև, իրավապահ մարմինները և դատախազները պետք է առաջնահերթ քայլեր ձեռնարկեն երեխայի խնամքն ապահովելու ուղղությամբ, խուսափեն վնաս պատճառելուց և գործեն, ելնելով երեխայի լավագույն շահերից<sup>62</sup>:

Միջազգային չափանիշներին<sup>63</sup> և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումներին համապատասխան՝ «կարևոր է, որպեսզի հանցագործության համար դատապարտվող երեխային վերաբերվեն նրա տարիքին, մտավոր և հուզական ունակություններին համապատասխան, և քայլեր ձեռնարկվեն՝ աջակցելու դատաքննության ընթացքում նրա մասնակցության ու գիտակցման ապահովման ուղղությամբ<sup>64</sup>»: Ավելին, երեխաների մասնակցությամբ բոլոր դատավարություններում պետք է կիրառվի հրատապության սկզբունքը՝ երեխայի լավագույն շահերը պաշտպանելու և արագ պատասխան տալու համար՝ հարգելով օրենքի գերակայությունը<sup>65</sup>: Երեխայի թրաֆիքինգի համատեքստում խիստ կարևոր է դառնում ապահովել երեխա զոհերի նույնացման գործընթացը: Միջազգային չափանիշներին համապատասխան՝ եթե կասկածվում է անձի երեխա լինելու փաստը, խորհուրդ է տրվում նրան վերաբերվել որպես երեխայի այնքան ժամանակ, մինչև չպարզվի նրա տարիքը<sup>66</sup>:

Ինչ վերաբերում է ձերբակալմանը, ապա կարևորվում է երեխաներին ոստիկանական խցերում կամ ազատագրկման այլ վայրերում չպահվելու հանգամանքը: Կարող է անհրաժեշտ դառնալ երեխաներին պահել հատուկ միջավայրում՝ ուշադրություն դարձնելով անվտանգության և պաշտպանության հարցերին: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը նշում է, որ « ո՛չ մի պարագայում երեխան չպետք է տեղափոխվի որևէ կալանավայր, ներառյալ՝ ոստիկանական խցեր, բանտեր կամ էլ անգամ երեխաների համար նախատեսված կալանավայրեր<sup>67</sup> »:

#### ***Կեղծ փաստաթղթեր օգտագործող աղջիկը փախչում է թրաֆիքինգ իրականացնողից***

16 տարեկան նիգերիացի մի աղջիկ համաձայնվել էր տեղափոխվել Միացյալ Թագավորություն՝ խուսափելով իր հայրենիքում 63 տարեկան տղամարդու հետ նախնական համաձայնությամբ պայմանավորված ամուսնությունից: Երկիր ժամանելուց հետո նրա նկատմամբ ուժ են կիրառում, բռնաբարում և ստիպում զբաղվել մարմնավաճառությամբ՝ 60.000 եվրո պարտքի դիմաց, ինչն իբրև պայմանավորված է նրան՝ Անգլիա տեղափոխելու գործընթացի կազմակերպման ծախսերով: Որոշ ժամանակ անց նրան հաջողվում է փախչել, բայց նա հայտնաբերվում է ոստիկանության կողմից՝ կեղծ փաստաթղթեր օգտագործելով Ֆրանսիայի հետ սահմանը հատելիս: Նրան մեղավոր ճանաչեցին անձը հաստատող կեղծ փաստաթղթեր օգտագործելու համար և դատապարտեցին ազատագրկման 8 ամիս

<sup>62</sup> ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ, Եվրոպայում թրաֆիքինգի ենթարկված երեխաների իրավունքների պաշտպանության ուղեցույց, 2006թ., Ժնև

<sup>63</sup> ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերով խորհուրդ

<sup>64</sup> Մարդու իրավունքների եվրոպական դատարան, «Վ.»-ի գործ, 1999թ.

<sup>65</sup> Եվրոպայի Խորհուրդ, Նախարարների խորհրդի ուղեցույց, 2010 թ., նոյեմբեր

<sup>66</sup> Եվրոպայի Խորհուրդ, ՄԱԿ-ի Անդրազգային հանցագործության դեմ պայքարի կոնվենցիա

<sup>67</sup> ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Եվրոպայում թրաֆիքինգի ենթարկված երեխաների իրավունքների պաշտպանության ուղեցույց, 2006թ., Ժնև

Ժամկետով: Նրա դատավճիռը բողոքարկվեց: Իր որոշման մեջ Վերաքննիչ դատարանն ուշադրություն դարձրեց Եվրոպայի Խորհրդի՝ Մարդկանց շահագործման դեմ պայքարի միջոցների մասին կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի վրա: Վերաքննիչ դատավարությունում պարզվեց, որ աղջիկը 16 կամ 17 տարեկան է, ավելին, Poppy Project-ի սոցիալական աշխատողները նրան նույնացրեցին որպես մարդկանց թրաֆիքինգի հնարավոր զոհ և դիմեցին աղջկա պաշտպանին՝ նրա հետ հետագա աշխատանքներ իրականացնելու համար: Սակայն այդ դիմումը մերժվեց և գործը այդպես էլ շարունակվեց՝ առանց հնարավորություն ընձեռելու ուսումնասիրել այս դեպքը և հասկանալ աղջկա թրաֆիքինգի զոհ հանդիսանալու հանգամանքը: Վերաքննիչ դատարանը հետագայում պարզեց, որ դատախազությունը չի քննարկել աղջիկա պաշտպանության իրականացումը որպես հանրային շահից բխող տարր դիտելու փաստը, որ ոչ ոք հաշվի չի առել պետության պարտավորությունը նրան՝ որպես երեխայի պաշտպանելու հարցը, և որ դատավորն ինքը անգամ չի մտածել նրա տարիքի մասին, քանի որ երեխա լինելով՝ նա չպետք է ընդհանրապես ներգրավվեր դատաքննության մեջ: Վերաքննիչ դատարանը գտավ, որ նրա դատապարտման հանգամանքները «ամոթալի են» և չեղյալ համարեց այն՝ հիմնավորելով, որ տեղի չի ունեցել արդար դատաքննություն:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան 1-ին հոդվածով նախատեսում է, որ «երեխա<sup>68</sup> է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուրանձ:» Երեխայի լավագույն շահերը պետք է դիտվեն որպես «առաջնային հետաքրքրություն» բոլոր այն դեպքերում, որտեղ պետությունն ունի իր դերակատարումը (Հոդված 3.1): Իրականում, երեխաների խոցելիությունը շահագործման ենթարկվելը մի խնդիր է, որը քննարկվում է կոնվենցիայում: Այն անգամ ներառված է Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրությունում<sup>69</sup>: Այս փաստաթղթերից յուրաքանչյուրը պարունակում է դրույթներ, որոնք շեշտում են երեխայի լավագույն շահերից և կարիքներից բխող գործողությունների կատարման անհրաժեշտությունը: Մասնավորապես, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հոդված 37-ն ամրագրում է.

«Որևէ երեխա չպետք է զրկվի իր ազատությունից անօրինական ճանապարհով կամ կամայականորեն: Երեխայի ձերբակալումը, ազատագրկումը կամ կալանավորումը պետք է կատարվի օրենքին համապատասխան և պետք է կիրառվի որպես վերջին ատյանի միջոց և ամենակարճ ժամանակով:»

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հանձնաժողովն ընդհանուր մեկնաբանություններում, որ վերաբերում են հայրենիքից դուրս առանց ուղեկցողի ճանապարհորդող/ մնացած երեխաների բուժմանը, խորհուրդ է տալիս, որպեսզի «ընդհանուր առմամբ երկրի իշխանություններն առանց ուղեկցողի ճանապարհորդող/ մնացած երեխաների՝ ներառյալ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված երեխաների մասին մշակվող մոտեցումներում պետք է ապահովեն երեխաների՝ քրեական պատասխանատվության չենթարկվելու նախապայմանը՝ այլ երկրի տարածք ապօրինի մուտք գործելու կամ երկրի տարածքում գտնվելու համար<sup>70</sup>: Հանձնաժողովն անդրադառնում է նաև երեխաների կալանավորման

<sup>68</sup> ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, 1989թ.

<sup>69</sup> ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրություն, 2000թ.

<sup>70</sup> ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների պաշտպանության հանձնաժողով, 2005թ.:

հարցերին միջազգային միգրացիայի համատեքստում, նշելով, որ «երեխայի կալանավորումն իր կամ իր ծնողների միգրացիոն կարգավիճակի պատճառով համարվում է երեխայի իրավունքների խախտում և միանշանակ հակասում է երեխայի լավագույն շահերի սկզբունքին<sup>71</sup>»:

Հաճախ երեխաներն ավելի քիչ են կարողանում դիմակայել թրաֆիքինգի կազմակերպիչների պահանջներին, քան մեծահասակները: Հրատապ է պատժի չկիրառման պարտավորությունը կարևորել հատկապես երեխաների դեպքում՝ ներառյալ վարչական սանկցիաների չկիրառումը:

### **ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձի նկատմամբ անպատժելիության սկզբունքը պետք է իրականացվի երկու ուղղությամբ՝

եթե նրա կողմից կատարված հանցագործությունը տեղի է ունեցել վերջինիս՝ մարդկանց թրաֆիքինգի ենթարկելու արդյունքում,

եթե նրա կատարած հանցագործությունն առնչություն չունի նրա՝ թրաֆիքինգի ենթարկվելու հետ, սակայն նա կատարել է այն հարկադրանքի ներքո, քանի որ գտնվելով թրաֆիքինգի զոհի կարգավիճակում, չունեի գործողություններ կատարելու ազատություն<sup>72</sup>:

Մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց նկատմամբ անպատժելիության սկզբունքի վերաբերյալ դատախազների և քրեական արդարության այլ դերակատարների համար նախատեսված ուղեցույցները և օրենսդրությունը պետք է պարունակեն այս երկու մոտեցումները:

Հնարավոր չէ սահմանել այն հնարավոր հանցագործությունների ցանկը, որ կարող է կատարել թրաֆիքինգի ենթարկված անձը թրաֆիքինգի ենթարկվելու ժամանակահատվածում կամ որպես դրա հետևանք: Մարդկանց ենթարկում են շահագործման տարբեր նպատակներով և սովորաբար նրանց կատարած հանցագործություններն անմիջականորեն առնչվում են այդ նպատակների հետ: Սակայն կան որոշ հանցագործություններ, որոնք հաճախ կատարվում են մարդկանց թրաֆիքինգի համատեքստում<sup>73</sup>:

Մարդկանց թրաֆիքինգի ենթարկվելու ժամանակահատվածում կատարված հանցագործությունները կարող են ներառել, սակայն չսահմանափակվել այնպիսի հանցագործություններով, ինչպիսիք են՝ միգրացիոն օրենսդրության խախտումը, ճամփորդական փաստաթղթեր, աշխատանքային թույլտվություն և ժամանակավոր կացության իրավունք ստանալու նպատակով կեղծ տեղեկությունների տրամադրումը, սահմանների ապօրինի հատումը, վիզայի ժամկետի խախտումը և այլն:

Մարդկանց թրաֆիքինգի ենթարկվելու հետևանքով կատարվելիք հավանական հանցագործությունները ներառում են այն հանցագործությունները, որոնք կատարվել են թրաֆիքինգի ենթարկվելու ժամանակահատվածում, երբ զոհն արդեն իսկ վերահսկվում էր շահագործողի կողմից: Այսպիսի հանցագործությունները կարող են ներառել, բայց

<sup>71</sup> ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների պաշտպանության խորհուրդ, 2005թ.:

<sup>72</sup> ՄԱԿ-ի Մարդկանց շահագործման հարցերով աշխատանքային խումբ, 2009թ., դեկտեմբերի 9-ը:

<sup>73</sup> ՄԱԿ-ի հանցագործությունների և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի Մարդկանց թրաֆիքինգի մասին մոդելային օրենք



չսահմանափակվել այն հանցագործություններով, որոնք վերաբերում են շահագործման տեսակին, որի համար գոհը հավաքագրվել է: Օրինակ՝ գոհերը, որոնք հարկադրաբար զբաղվել են մարմնավաճառությամբ, հնարավոր է չունենին թույլտվություն դրա համար (այն երկրներում, որտեղ անհրաժեշտ է դա ունենալ), կամ հնարավոր է աշխատում էին, խախտելով տվյալ երկրի՝ մարմնավաճառությունը կարգավորող օրենսդրությունը : Արդյունաբերության ոլորտում աշխատողները հնարավոր է, որ չունենան աշխատանքի թույլտվություն: Երեխաները հնարավոր է կատարեն գողություն: Մուրացիկները, հնարավոր է, որ խախտեն տվյալ երկրի որևէ օրենսդրություն: Թրաֆիքինգ իրականացնողները, հնարավոր է, պահանջեն իրենց գոհերից զբաղվել թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված գործողություններով կամ կատարել բռնությամբ ուղեկցվող հանցագործություններ: Այլ դեպքերում թրաֆիքինգի կազմակերպիչները հնարավոր է, որ հարկադրեն գոհերին իրականացնել հանցագործություն նաև թրաֆիքինգից կամ շահագործումից ազատելուց հետո, օրինակ՝ նրանց տրամադրելով կեղծ փաստաթղթեր՝ մասին գոհի չտեղեկացնելով:

Այնուամենայնիվ, գոհը կարող է ներգրավված լինել արգելված գործունեության մեջ, որը չի հանդիսանում թրաֆիքինգ իրականացնողների վերահսկողության անմիջական հետևանք, սակայն որոշակիորեն փոխկապված է թրաֆիքինգի դեպքի հետ: Սա կարող է տեղի ունենալ այնպիսի դեպքերում, երբ թրաֆիքինգի ենթարկված անձը փախուստի է դիմում թրաֆիքինգ իրականացնողի ազդեցությունից ազատվելու նպատակով, և այլընտրանքի բացակայության պատճառով ծայրահեղ անհրաժեշտություն պայմաններում կատարում է իրավախախտում: Այս պարագայում նույնպես պետք է կիրառվի անպատժելիության սկզբունքը :

Վերջապես, ամենադժվար իրավիճակները նրանք են, երբ մարդկանց թրաֆիքինգի նախկին գոհը թրաֆիքինգի կամ շահագործման մեջ է ներգրավում այլ անձի, և տեղի է ունենում «բռնության շղթա» կոչվող երևույթը<sup>74</sup>: Այսպիսի դեպքերում թրաֆիքինգ իրականացնողները ղեկավարում են իրենց գոհերին և դարձնում իրենց օգնականներ՝ այլ անձանց շահագործելու նպատակով: Սա կանխամտածված ռազմավարություն է՝ մնացած գոհերի նկատմամբ վերահսկողությունը պահպանելու նպատակով՝ նախկին գոհին ներգրավելով «աշխատանքում» և դրանով ավելի մեծ վախի մեջ պահելով գոհերին: Նմանատիպ դեպքերում միշտ չէ, որ հնարավոր է գտնել ապացույցներ, որոնք կվկայեն այն մասին, որ գոհերը հարկադրաբար հանցագործ են դարձել՝ մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման մեջ գտնվելու հետևանքով:

Այս հանցագործությունները վտանգ են ներկայացնում հասարակական անվտանգության և կարգի պահպանման տեսակետից: Պետությունն արդարացիորեն շահագրգռված է այն կանխելու և հանցագործներին պատժելու հարցում: Ինչևիցէ, երբ մարդկանց թրաֆիքինգի գոհը հանցագործություն է կատարում՝ թրաֆիքինգի ենթարկվելու անմիջական հետևանքով, ապա դատախազը կամ դատավորը պետք է ուսումնասիրեն, յուրաքանչյուր դեպքի պարագայում, թե ի՞նչ չափով է այս հանցագործությունը կապված թրաֆիքինգի հետ և դիտարկեն գոհի ինքնուրույն գործելու անհնարիությունը: Այն դեպքերում, երբ հանցագործության ենթադրյալ կատարողը թրաֆիքինգի ենթարկված անձն է, պետությունը պետք է նրանց պաշտպանի հետապնդումից, կալանավորումից և պատժի ենթարկվելուց: Այն դեպքում, եթե թրաֆիքինգի ենթարկված անձը գործել է ինքնուրույն և կամավոր է կատարել հանցագործությունը, ապա նա ամբողջ ծավալով պետք է ենթարկվի պատասխանատվության:

<sup>74</sup> Անգլիայի Վերաքննիչ դատարանի գործ, 2010թ.

Պետք է հաշվի առնել, որ թրաֆիքինգի ենթարկված անձը կարող է և չիմանալ իր իրավունքների և պարտավորությունների մասին, իչպես նաև տեղյակ չլինի պատիժների, օրինակ՝ վարչական տուգանքների կիրառման մասին: Պետությունները պետք է հաշվի առնեն, որ մարդկանց թրաֆիքինգի ենթարկվածների հետ գործ ունենալու դեպքում, պետք է երաշխավորվի գոհերի համար հասկանալի լեզվով իրավաբանական տեղեկատվության և օգնության հասանելիությունը:

Քանի որ գոյություն չունի մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում կամ դրա հետևանքով թրաֆիքինգի ենթարկված անձանց կողմից կատարվող հնարավոր հանցագործությունների սպառիչ ցուցակ, և քանի որ կարող են ի հայտ գալ և արդեն ի հայտ են գալիս շահագործման նոր ձևեր, ապա պետությունները պետք է քննարկեն թրաֆիքինգի հարակից հանցագործությունների «բաց» ցանկի մշակման հարցը՝ դրանում ներառելով այն հանցագործությունները, որոնց կատարման դեպքում թրաֆիքինգի ենթարկված անձինք պետք է չենթարկվեն պատժի: Պետք է անպայման շեշտվի ցանկի ոչ սպառիչ լինելու հանգամանքը, և որ անպատժելիության սկզբունքը գործում է յուրաքանչյուր հանցագործության դեպքի վերաբերյալ՝ եթե այն կապ ունի մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման հետ: Այսպիսի ցանկը պետք է լայնորեն տարածվի դատախազների, դատական և իրավապահ մարմինների, ինչպես նաև թրաֆիքինգի հետ կապ չունեցող պետական այլ մարմինների շրջանում:

## **ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ**

ԵԱՀԿ անդամ պետությունների օրենսդրությամբ անպատժելիության սկզբունքի կիրարկումը շատ տարբեր է: Որոշ երկրներ իրենց օրենսդրությամբ անգամ չեն էլ անդրադառնում այս հարցին, իսկ որոշ երկրներում սկսել են այն իրականացնել տարբեր մակարդակների վրա: Շատ ցանկալի է, որպեսզի պետական մակարդակով ճանաչվի անպատժելիության սկզբունքը, ինչպես նաև դրա կիրարկման հնարավորությունն ու ԵԱՀԿ համապատասխան այլ պարտավորությունների կատարումը:

Որոշ երկրներ ներկայացրել են ՄԱԿ-ի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մոդելային օրենսդրությամբ սահմանված պատժի չկիրառմանը վերաբերող հատուկ դրույթներ՝ առաջարկելով ներքոհիշյալ տեքստը որպես հիմք՝ ազգային օրենսդրության մեջ ներառելու համար.

«Մարդկանց թրաֆիքինգի ենթարկված գոհերը պետք է ազատվեն քրեական և վարչական պատասխանատվությունից այն հանցագործությունների համար, որոնք կատարվել են իրենց կողմից մարդկանց թրաֆիքինգի ենթարկվելու արդյունքում կամ որպես դրա հետևանք:

Թրաֆիքինգի գոհը չպետք է քրեական կամ վարչական պատասխանատվության ենթարկվի միզբացիոն իրավախախտումների համար՝ գործող ազգային օրենսդրության համաձայն:

Սույն հոդվածի դրույթները պետք է ընդունվեն առանց վերապահումների՝ նաև ապահովելով թրաֆիքինգի գոհերի համար հասանելի պաշտպանության միջոցները<sup>75</sup>»:

<sup>75</sup> ՄԱԿ-ի հանցագործությունների և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի կազմակերպության Մարդկանց թրաֆիքինգի մասին մոդելային օրենք

Եվրոպայի Խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին կոնվենցիայի ԳՐԵՏՍ լորձագետների խումբը պարբերաբար ուսումնասիրում է նշված կոնվենցիայի հոդված 26-ով ամրագրված դրույթի կատարումը, որը վերաբերում է անպատժելիության սկզբունքին: Թեև այս հոդվածի պահանջները պարտադիր են կոնվենցիային անդամակցած բոլոր երկրների համար, այդուհանդերձ անդամ երկրների իրավակիրառ պրակտիկան այս հարցում հետևողական չէ: ԳՐԵՏՍ-ի կողմից պատրաստված և ներկայացված գեկոյցները ցույց են տալիս, որ միայն մի քանի երկրներ են ընդունել հատուկ դրույթներ, որոնք վերաբերում են պատժի չկիրառմանը, և այսպիսի դրույթները մեծ մասամբ իրենց շրջանակով ավելի սահմանափակ են (օրինակ՝ նրանք վերաբերում են որոշ հանցագործություններին, ինչպիսին են, ասենք, միգրացիոն հանցագործությունները):

ԳՐԵՏՍ-ի կողմից գնահատված մի քանի երկրները կամ ձախողել են, կամ խոչընդոտների են հանդիպել մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց՝ թրաֆիքինգի հետ կապված հանցագործություններից արդյունավետ պաշտպանություն իրականացնելու ժամանակ: Սրա պատճառները կա՛մ թրաֆիքինգի ենթարկված զոհերին չնույնացնելն է, կա՛մ հոդված 26-ի պահանջներն ազգային օրենսդրության մեջ չկիրառելը<sup>76</sup>:

Հիրավի, հաշվի առնելով իրավական համակարգերի բազմազանությունը՝ այս սկզբունքի կիրառումն ազգային մակարդակով հանգեցնում է երկրների տարբեր իրավակիրառ պրակտիկաների ձևավորման և գործնական կիրարկման համար առաջարկում է մի շարք մարտահրավերների լուծում: Օրինակ՝ մի քանի դեպքերում այս սկզբունքի կիրարկումը հանգեցնում է մարդկանց թրաֆիքինգի զոհերի դեմ դատավարության ավտոմատ կասեցման՝ նրանց որպես այդպիսիք ճանաչումից անմիջապես հետո: Առավել հաճախ հանդիպող դեպքերում սկզբունքի կիրառումը յուրաքանչյուր դեպքի համար պահանջում է ոստիկանության, դատախազի և դատավորի կողմից որոշման կայացում :

***Մարդկանց թրաֆիքինգի զոհը կադարում է գողություն և հանդես է գալիս որպես զոհ-վկա***

Ալբանացի Ռ-ն անչափահաս էր, երբ ծնողների կողմից վաճառվել էր Ս-ին: Ռ-ն ապրում էր ստրկությանը նմանվող պայմաններում Ս-ի հետ և շահագործվում էր նրա կողմից՝ որպես տնային տնտեսուհի: Ս-ն ստիպում էր նրան կատարել նաև գողություններ: Դատարանում Ռ-ն ցուցմունք տվեց Ս-ի դեմ, բայց Ս-ն հակադարձեց՝ ասելով, որ Ռ-ի ցուցմունքները վստահելի չեն, քանի որ նա մի քանի գողություն է կատարել: Նա դատարանին ներկայացրեց սիրային նամակ, որը գրվել էր Ռ-ի կողմից, որտեղ նա խոստովանում էր, որ գողությունները նա կատարել է կամավոր: Դատավորը չհավատաց Ս-ին և պարզեց, որ նամակը գրվել էր Ռ-ի կողմից՝ Ս-ի հարկադրանքի ներքո: Ս-ն ստիպում էր Ռ-ին կատարել գողություններ՝ դրանով կասկածի տակ դնելով հետագայում Ռ-ի՝ իր դեմ հնարավոր ցուցմունք տալը: Ս-ին դատապարտեցին մարդկանց թրաֆիքինգի համար: Ռ-ն չհետապնդվեց, իսկ Ս-ն դիմեց Վերաքնիչ դատարան, որը բողոքը թողեց անփոփոխ:

Մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձինք հնարավոր է, որ կատարեն հանցագործություններ նաև ճնշման ազդեցության տակ (անհրաժեշտությունից/ կարիքից

<sup>76</sup> Եվրոպայի Խորհուրդ, Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին կոնվենցիայի Փորձագետների խմբի կոնվենցիայի կիրարկման գնահատման հաշվետվություններ, 2011-2013թթ.

դրդված), օրինակ՝ մահվան սպառնալիքի տակ կամ ծանր մարմնական վնաս հասցնելու սպառնալիքի տակ, երբ չկա այլընտրանք՝ անգամ փախուստի դիմելով<sup>77</sup>:

***Մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց սրիպել են գրառվել թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ***

Ուզբեկստանում երկու երիտասարդ կին հավաքագրվել են՝ Թայլանդում որպես մատուցողուհիներ աշխատելու կեղծ խոստումներով: Բանքոք ժամանելուն պես նրանց շուրջ վեց ամիս հակրադրաբար ներգրավեցին մարմնավաճառության մեջ: Հետագայում նրանց վաճառեցին չինական մի հանցավոր խմբին, որը խոստացավ նրանց ազատ արձակել, եթե համաձայնվեն իրենց ուղեբեռում անցկացնել ինչ-որ ապրանք՝ Թայլանդի հետ սահմանը հատելիս: Նրանք երկուսն էլ համաձայնվեցին և Պակիստանից տեղափոխվեցին Թայլանդ՝ իրենց հետ ապօրինի տեղափոխելով նաև թմրամիջոցներ: 2000 թվականին նրանց ձերբակալեցին Բանքոքի օդանավակայանում, դատապարտեցին 32 և 25 տարվա ազատազրկման՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար: 2012 թվականին նրանցից մեկին շտրիվեց համաներում և միջազգային ՀԿ-ի օգնությամբ նա վերադարձավ հայրենիք: Թեև 2005 թվականին Թայլանդի թագավորին գրվեց համաներման խնդրանք և փաստաբանները շարունակաբար ձեռնարկում են երկրորդ կնոջն ազատելու ուղղությամբ տարբեր նախաձեռնություններ, նա դեռ ազատազրկված է:

Կան շատ դժվար դեպքեր, երբ զոհի և հանցագործի միջև տարանջատումը շատ թույլ է, օրինակ երբ զոհերը ներգրավված են լինում հավաքագրման գործընթացի մեջ: Մինչդեռ սա կարող է լավ կանխամտածված ռազմավարություն լինել թրաֆիքինգ իրականացնողների կողմից. հնարավոր է, որ ոչ միշտ առկա լինեն ապացույցներ այդ գործողությունները հարկադրաբար կատարելու մասին, կամ առ այն, որ որ զոհերը այլընտրանք չունեին, քան կատարել հանցագործի հրահանգները: Այլ դեպքերում, երբ զոհերը փորձ են կատարել փախուստի դիմել թրաֆիքինգ իրականացնողներից՝ հնարավոր է, որ հանցագործություն կատարած լինեն, և այս դեպքերում հնարավոր է չլինեն ապացույցներ այն մասին, որ զոհը դա կատարել է հարկադրված լինելով, ինչը թրաֆիքինգի ենթարկվելու հետևանք է: Օրինակ՝ կարող են փախուստի դիմել՝ օգտագործելով կեղծ փաստաթղթեր<sup>78</sup>:

***Մարդկանց թրաֆիքինգ՝ հանցագործություններ կատարելու մեջ հարկադրաբար ներգրավվելով (գողություն)***

Ջոհերը հավաքագրվել են Ռումինիայում՝ Բելգիայում լավ աշխատանքի խոստումներով: Կազմակերպվել էր նրանց տեղափոխումը Բելգիա, որտեղ նրանց տրամադրվել էր բնակավայր, և նրանց ստիպել էին գողությամբ զբաղվել հագուստի խանութներից՝ տեղափոխման և ապրելու ծախսերը վերադարձնելու համար: Գողացված իրերը տանում էին Ռումինիա և վաճառում: Ջոհերից մեկին նաև ստիպում էին զբաղվել մարմնավաճառությամբ: Բելգիայի ոստիկանությունը սկսեց հետաքննությունը՝ ստանալով տեղեկություններ խանութներում պարբերաբար նույն եղանակով կատարվող գողությունների մասին: Ոստիկանությունը պարզեց, որ այս գողությունների հետևում կանգնած է կազմակերպված հանցավոր խմբավորում, որը ստիպում է մարդկանց կատարել գողություններ և անգամ

<sup>77</sup> Այս օրինակը նախատեսված էր Անգլիայի Վերաքննիչ դատարանի կողմից մի գործի շրջանակներում, 2010թ.

<sup>78</sup> Անգլիայում Վերաքննիչ դատարանի կողմից քննվող դեպք, 2010թ.

սովորեցնում, թե ի՞նչ է պետք ասել ոստիկանությունում՝ հանցագործության համար ձերբակալվելու դեպքում: Հետաքննության ընթացքում իրականացվեցին հեռախոսազրույցների ձայնագրություններ, միջազգային համագործակցություն, որի արդյունքում դատապարտվեց 15 հանցագործ՝ կազմակերպված հանցագործության համար, որոնցից 6-ը դատապարտվել էր կազմակերպված հանցագործության, 6-ը՝ նաև գողության և 6-ը՝ նաև սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգ կազմակերպելու համար: Գողության և մարդկանց թրաֆիքինգի հարցերով զբաղվող համապատասխան գերատեսչությունների միջև արդյունավետ համագործակցության արդյունքում, մոտավորապես 20 անձինք ճանաչվեցին որպես հարկադրաբար հանցագործություններ կատարած զոհեր և չդատապարտվեցին: Մեղադրյալներից 3-ը դիմեցին Վերաքննիչ դատարան, որը սակայն մերժեց բողոքը և անփոփոխ թողեց 2013 թվականի հունվարի 24-ի որոշումը:

Անպատժելիության սկզբունքի կիրառման առկա պրակտիկան բացահայտում է այն դժվարությունները, որոնք ի հայտ են գալիս հարկադրաբար կատարվող հանցագործությունների արդյունավետ և հետևողական քննության իրականացման ընթացքում՝ հատկապես կապված թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ: Հարկադրաբար այս տեսակի հանցագործություններ կատարած զոհերի նույնացումը շատ ավելի դժվար է իրականացնել, քան այն զոհերինը, ովքեր հարկադրաբար կատարել են այլ հանցագործություններ՝ օրինակ, կապված կեղծ փաստաթղթերի օգտագործման հետ: Պատճառն այն է, որ գողությունների և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված դեպքերի, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի բացահայտմամբ և հետապնդմամբ զբաղվող ոստիկաններն ու դատախազները տարբեր են: Նրանք ծանոթ չեն մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցագործությունների առանձնահատկություններին և հարկադրանքի միջոցների հաճախակի կիրառմանը՝ զոհերի նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով (օրինակ՝ հուզական բռնության կիրառում, վիճակի խոցելիության օգտագործում և այլն): Ավելին, այսպիսի գործերի քննությունը հաճախ պահանջում է փաստերի հավաքագրում, հեռախոսազրույցների ձայնագրում և հսկողության իրականացում՝ որպեսզի ապացուցվի զոհի՝ հանցագործության կատարման մեջ հարկադրաբար ներգրավվելու փաստը: Այսպիսով, նման դեպքերը պահանջում են արդյունավետ համագործակցություն և հաղորդակցություն դատախազական և ոստիկանական տարբեր ծառայությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների միջև, որպեսզի հաշվի առնվեն մարդկանց թրաֆիքինգի առանձնահատկությունները, ինչպես նաև թրաֆիքինգի զոհերի խոցելիությունը: Քանի որ երեխաներին հաճախ են հարկադրում հանցագործություններ կատարել, ապա այսպիսի դեպքերը պահանջում են հատուկ ուշադրություն, հաշվի առնելով նրանց տարիքը, կարգավիճակը, խոցելիությունն ու իրավունքները:

***Մարդկանց թրաֆիքինգի ենթարկված աղջկա դատապարտումը՝ կանաքիսի աճեցման համար***

Վիետնամացի երիտասարդ մի աղջիկ հավաքագրվել և տեղափոխվել էր Միացյալ Թագավորություն և շահագործվել կանաքիսի աճեցման աշխատանքներում: Նրան ձերբակալեցին ու դատապարտեցին թմրամիջոցների հետ կապված հանցագործության համար՝ ենթարկելով 20 ամսվա ազատազրկման: Գործը վարող դատավորը նշեց. «Ես հասկանում եմ այդ տիպի դրությունը, որում դու հայտնվել էիր և որի պատճառով դու ենթարկվեցիր մարդկանց շահագործմանը և տեղափոխվեցիր Միացյալ Թագավորություն, ես հասկանում եմ հետևանքները, որոնց կհանդիպեիր դու և քո ընտանիքը՝ ոստիկանների կողմից բռնվելու դեպքում, քանի որ դու գիտակցում էիր, որ զայնով այս երկիր, դու արդեն պարտավորություն ունեիր վերադարձնելու թմրաֆիքինգի կազմակերպիչներին քեզ վրա ծախսած գումարի պարտքը, և որ հավանաբար պետք է կատարեիր հակաօրինական գործողություններ: Եվ, հայտնելով այս վիճակում, դու հասկացար, որ պետք է զբաղվես կանաքիսի ապօրինի աճեցմամբ: Դատարանը ցուցաբերում է կարեկցանք քո նկատմամբ՝ նկատի ունենալով քո կարգավիճակը, բայց պետք է խոստովանի, որ սա սովորական դեպք չէ դատարանի համար: Վերջերս դատարանները քննում են շատ դեպքեր, որոնք կապված են վիետնամացի երիտասարդ աղջիկների հետ, ովքեր տեղափոխվել են Անգլիա՝ կանաքիսի ապօրինի աճեցմամբ զբաղվելու համար: Դու ճանաչվում ես մեղավոր և այս հանցագործության համար օրենքով նախատեսված պատիժն ազատազրկումն է՝ առնվազն 3 տարի ժամկետով: Ամենակարճ ազատազրկումը, որը ես կարող եմ կիրառել քո նկատմամբ՝ դա 20 ամսվա ազատազրկումն է: Վերաքննիչ դատարանը որոշեց, որ նա 17 տարեկան երեխա է, և որ կարող էր լինել 14 տարեկան, երբ ներգրավվել էր թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ և չեղյալ հայտարարեց դատարանի որոշումն ու ազատեց վիետնամացի աղջկան: Վերաքննիչ դատարանի կողմից գործի ուսումնասիրման ժամանակ աղջիկն արդեն իսկ շուրջ 6 ամիս գտնվել էր անազատության պայմաններում: Այսպիսով ստացվեց, որ աղջիկը կրել է քրեական պատասխանատվություն՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար»:

Ներկայացված դեպքերը ցույց են տալիս, թե որքան դժվար է ապահովել պետությունների մշտական և հետևողական հարգանքը թրաֆիքինգի զոհերի իրավունքների նկատմամբ, ներառյալ երեխա զոհերի, երբ նրանց՝ զոհ ճանաչելու, պատժից ազատվելու և պաշտպանություն ստանալու համար կիրառված միջոցների առկայությունը պարտադիր չէ: Այս դեպքերը ցույց են տալիս նաև անպատժելիության պարտավորության մեկնաբանումը սահմանափակելու միտումը, որը կարող է հանգեցնել ընդհուպ դատապարտման, այդ դեպքում, երբ պետք է ապահովել թրաֆիքինգի ենթարկված անձանց պաշտպանությունը և անպատժելիությունը թրաֆիքինգի ենթարկվելու արդյունքում կատարած հանցագործությունների համար<sup>79</sup>: Ավելին, դրանք հիմնավորում են պատժի չկիրառման մասին ազգային համապատասխան օրենսդրության ընդունման անհրաժեշտությունը:

Ամփոփելով նշենք, որ անպատժելիության սկզբունքի կիրառումը կախված է տվյալ երկրի նախապատվություններից, թե որքանով է երկիրը գերադասում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը՝ թրաֆիքինգի զոհերի նկատմամբ պատժի կիրառումից<sup>80</sup>: Ավելի լայնորեն, այս սկզբունքի կիրառումը ցույց է տալիս, թե որքանով է երկիրն իր

<sup>79</sup> Անգլիայի Վերաքննիչ դատարանի գործեր, 2012թ.

<sup>80</sup> Անգլիայի Վերաքննիչ դատարանի գործեր, 2012թ.

հակաթրաֆիքինգային գործողությունների համատեքստում կարևորում թրաֆիքինգի ենթարկված անձանց պաշտպանությունը: ԵԱՀԿ հատուկ ներկայացուցչի համոզմամբ, սկզբունքի կիրառման այս նեղ մեկնաբանությունը կարող է երկրներին ուղղորդել նրանց պարտավորությունների խախտմանը՝ կապված թրաֆիքինգի գոհերի պաշտպանության հարցերի հետ:

### **ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

Պետությունները պարտավոր են երաշխավորել մարդկանց թրաֆիքինգի գոհերի իրավունքները, ներառյալ թրաֆիքինգի ենթարկվելու հետևանքով կատարված հանցագործությունների համար պատժի չենթարկվելու իրավունքը: Այսպիսով, պետությունները պետք է երաշխավորեն անպատժելիության սկզբունքի արդյունավետ կիրառումն ազգային արդարադատական համակարգում և պրակտիկայում:

Եթե ապացուցվում է, որ անձը ենթարկվել է մարդկանց թրաֆիքինգի՝ ազատության սահմանափակման պատճառով, ապա նրանք չպետք է պատժվեն կատարված հանցագործությունների համար, որոնք ուղակիորեն կապված են թրաֆիքինգի ենթարկվելու հետ կամ դրա հետևանք են: ԵԱՀԿ հատուկ ներկայացուցչին հայտնում է այն տեսակետը, որ անպատժելիության սկզբունքը պետք է մեկնաբանվի մարդկանց թրաֆիքինգի սահմանման լույսի ներքո, հատկապես երբ մատնանշվում է մարդկանց թրաֆիքինգի միջազգային սահմանման մեջ ներառված հարկադրանքի հասկացողության լայն մեկնաբանումը: Հանցագործություն կատարելուն «հարկադրված լինելը» ներառում է փաստական հանգամանքների ամբողջականություն, երբ թրաֆիքինգի գոհը գործել է իր կամքից անկախ, քանի որ թրաֆիքինգ իրականացնողները վերահսկում էին նրան՝ կիրառելով բռնություն, ուժ և անօրինական այլ միջոցներ, ներառյալ՝ վիճակի խոցելիությունը և իշխանության չարաշահումը: Այսպիսի հանգամանքները շատ բնորոշ են մարդկանց թրաֆիքինգին՝ գոհերը կարող են գործել հարկադրանքի ներքո և հարկադրված լինել կատարել հանցագործություններ: Այսպիսով, անպատժելիության սկզբունքը ենթակա է կիրառման բոլոր այս փաստացի իրավիճակներում, որոնք առնչվում են մարդկանց թրաֆիքինգին:

#### ***Երեխաների թրաֆիքինգ՝ կանաքիսի աճեցման համար նրանց աշխատանքը շահագործելով***

2012 թվականին Անգլիայի վերաքննիչ քրեական դատարանն ուսումնասիրել է կանաքիսի աճեցման համար երեխաների աշխատանքը շահագործելով թրաֆիքինգի երկու գործ:

Ն-ն Անգլիա է մուտք գործել անօրինական ճանապարհով, նրան առաջարկել են աշխատանք, բերել առևտրային չգործող արտադրամաս, որն օգտագործվում էր կանաքիսի աճեցման համար, և հայտնել, որ նա պետք է զբաղվի մաքրությամբ և խոհարարությամբ: Նրան չէին վարձատրում: Տունը վերահսկվում էր, պատուհանները ճաղավանդակներով էին և Ն-ն այլ անձանց հետ պահվում էր անազատ պայմաններում: Մի օր նրան հաջողվեց դուրս գալ գործարանի տարածքից, զանգել իր նկատմամբ հսկողություն իրականացնող անձին և հայտնել, որ նա այլևս չի ցանկանում վերադառնալ այնտեղ: Սակայն նրան հայտնեցին, որ նրա հետ կապված ծախսեր են իրականացվել և եթե նա փախչի, ապա նրան միևնույն է հայտնաբերելու են և սպանեն՝ անկախ այն փաստից, թե որտեղ է նա գտնվելու՝ Անգլիայում,

թե Վիետնամում: Այսպես, նա համաձայնվեց վերադառնալ և ուղարկված վարորդը վերջինիս վերադարձրեց գործարան: Մի օր ոստիկանությունը հայտնաբերեց կանաքիսի այդ գործարանը և նրան ձերբակալեցին: Նա 16 տարեկան էր, երբ եկել էր գործարան, իսկ ձերբակալման պահին՝ արդեն 17: Նրան մեղադրեցին կանաքիսի ապօրինի արտադրության մեջ և դատապարտեցին 18 ամսվա ազատազրկման: Նրան դատապարտելուց հետո նրա գործը հանձնվեց Ազգային Ուղղորդման Մեխանիզմով զբաղվող մարմնին, և միայն տևական ժամանակ անց Անգլիայի Սահմանային Գործակալությունը նրան ճանաչեց որպես թրաֆիքինգի զոհ և ազատ արձակեց:

Լ-ն տեղափոխվել էր Անգլիա իրեն որդեգրող հոր կողմից, բայց Անգլիայում նա կորցրեց կապը հոր հետ և երկու վիետնամցիներ նրան աջակցություն առաջարկեցին: Նրան տեղափոխեցին սեփական տուն, որն օգտագործվում էր կանաքիսի ապօրինի աճեցման համար, և որտեղ նա սկսեց ապրել ու աշխատել որպես այգեպան: Երբ ոստիկանությունը հայտնաբերեց այս տունը, նրան ձերբակալեցին: Նա ասաց, որ նա 15 տարեկան է, և որ նա չէր գիտակցել, որ այդ գործողությունը հակաօրինական է: Տարիքը ճշտելուց հետո պարզվեց, որ նա առնվազն 17 տարեկան է: Սոցիալական ծառայությունները հայտնել էին, որ նրա հանդիսանում է մարդկանց թրաֆիքինգի պոտենցիալ զոհ, սակայն դատախազությունը համոզիչ չհամարեց այդ փաստարկները, քանի որ ձերբակալման պահին նրա մոտ հայտնաբերվել էր 100 բրիտանական ֆունտ ստերլինգ կանխիկ գումար, բջջային հեռախոս, և տան պատուհանները չունեին ճաղավանդակներ: ԱՌԽ-ի հանձնաժողովն ուսումնասիրեց այս դեպքը և ճանաչեց նրան որպես մարդկանց թրաֆիքինգի զոհ, սակայն նրա նկատմամբ հետապնդումը շարունակվեց և նրան դատապարտեցին 20 ամսվա ազատազրկման՝ անչափահասների համար ազատազրկման վայրում պատիժը կրելու պայմանով:

Անգլիայի վերաքննիչ քրեական դատարանը մերժեց Եվրոպայի Խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին կոնվենցիայի հոդված 26-ի պահանջների հիման վրա ներկայացված երկու բողոքները: Որպես հիմնավորում ներկայացվեց հետևյալ հարցը՝ արդյո՞ք Ն-ի ձերբակալման պահին առկա հանգամանքներն այնպիսին էին, որ վկայում էին նրա «հարկադրանքի ազդեցության տակ լինելու մասին» և որոնց պատճառով նրան կարող են ազատել պատասխանատվությունից: Նրանց ազատազրկման ժամկետը կրճատվեց և համապատասխանաբար նրանք ստացան 4 և 12 ամսվա ազատազրկում, բայց դատարանը մերժեց նրանց դատավճիռների բեկանումը:

2012 թվականի նոյեմբերին Ն-ն և Լ-ն դիմեցին Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Պետությունը պետք է որոշում կայացնի՝ ա՛րդյոք տվյալ հանցագործությունը կապված է մարդկանց թրաֆիքինգի հետ, թե՛ ոչ: Եթե հանցագործությունն ուղղակիորեն փախկապակցված չէ մարդկանց թրաֆիքինգի հետ, ապա թրաֆիքինգի ենթարկված անձն ընդհանուր հիմունքներով պետք է պատասխանատվություն կրի կատարած հանցագործության համար: Եթե հանցագործությունը փոխկապակցված է մարդկանց թրաֆիքինգի հետ, ապա պետությունը պարտավոր է ապահովել անպատժելիության սկզբունքի ամբողջական և հետևողական կիրառումը: ԵԱՀԿ հատուկ ներկայացուցիչը հայտնում է այն տեսակետը, որ անպատժելիության սկզբունքը ներառում է թրաֆիքինգի զոհին ոչ միայն պատժի և տույժերի կիրառումից զերծ պահելը, այլ նաև հնարավորության դեպքում հետապնդումից և «հայտնաբերումից» պաշտպանությունը:

Հանրային հետապնդմամբ իրավական համակարգերում նախատեսված է հետապնդման իրականացումը հանցագործության կատարման մասին վկայող փաստերի



առկայության դեպքում: Առաջնային նշանակություն ունի այդ համակարգերում այնպիսի փոփոխությունների կատարումը, որոնցով կկանխվի թրաֆիքինգի գոհերի հետապնդումը: Եթե դրա իրականացումն անհանարին է, ապա թրաֆիքինգի ենթարկվելու հետևանքով հանցագործություն կատարած գոհերը կհանդիպեն լուրջ խնդիրների:

Երբ դժվար է, բայց ոչ անհնարին հանրային հետապնդմամբ իրավական համակարգերում չիրականացնել հետապնդում կամ հետաքննություն հանցագործության կատարման վերաբերյալ անգամ աննշան կասկածի դեպքում, պետք է նախատեսել դրույթ այդ հետապնդումը կամ հետաքննությունը հնարավորինս արագ դադարեցնելու մասին այն դեպքերում, երբ պարզվի, որ կասկածյալն իրականում հանդիսանում է թրաֆիքինգի գոհ և կատարված հանցագործությունը թրաֆիքինգի հետևանք է: Այն դեպքերում, երբ հետապնդման կամ հետաքննության նախաձեռնումը պահանջվում է օրենսդրությամբ, և երբ այդ պահանջը չի կարող փոփոխվել, ապա դատախազները պետք է անմիջապես կարճեն այդ վարույթը՝ ապահովելով անպատժելիության սկզբունքը:

Յուրաքանչյուր իրավական համակարգում գոյություն ունեն պաշտպանության տարբեր ձևեր, ինչպես օրինակ ինքնապաշտպանությունը, ամբաստանյալին պատասխանատվությունից ազատելը: Հանրային հետապնդմամբ իրավական համակարգերում, երբ դատախազը կամ դատավորն ընդունում են այսպիսի պատճառաբանությունը, ապա հետապնդումը պետք է կասեցվի նախաքննության վաղ փուլերում: Հարկադրանքը և անհրաժեշտ արդարացման հիմքերը սկզբունքորեն կարող են օգտագործվել թրաֆիքինգի գոհին այն հանցագործությունների կատարման պատասխանատվությունից ազատելու համար, որոնք կատարվել են թրաֆիքինգ ենթարկվելու արդյունքում կամ դրա հետևանքով: Սակայն դա շատ նեղ է մեկնաբանվում դատարանների կողմից, հետևաբար, շատ քիչ են կիրառվում թրաֆիքինգի գործերն ուսումնասիրելուց: Այդ իսկ պատճառով, ԵԱՀԿ հատուկ ներկայացուցիչը գտնում է, որ մարդկանց թրաֆիքինգի գոհերին վերաբերող անպատժելիության սկզբունքը պետք է ամրագրվի ազգային օրենսդրությամբ՝ Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի և ԵՄ 36/2011 հրահանգի դրույթներին համապատասխան: Այս հատուկ դրույթի համաձայն, այն հատկապես անհրաժեշտ է հանրային հետապնդմամբ իրավական համակարգերում՝ երաշխավորելու պատժի չկիրառումը վարույթի վաղ փուլում, որպեսզի գոհերը պաշտպանված լինեն ոչ միայն հետապնդումից, այլ նաև վարույթն անմիջապես կարճվի՝ համապատասխան ապացույցների ի հայտ գալու պահից: Ինչևիցե, վերջնական արդարացման կիրառման որոշումը պետք է կայացնի համապատասխան իրավասու դատական մարմինն անհապաղ:

Իրավական որոշ համակարգերում դատախազը կարող է ունենալ անձնական հայեցողություն կապված այն հարցի հետ, թե արդյո՞ք պետք է իրականացնել հետապնդում հանցագործության կատարման համար, թե՛ ոչ: Այն փաստը, որ կատարվել է հանցագործություն, ոչ միշտ է բավարար հետապնդում սկսելու համար: Պետք է որոշում կայացվի, որ հանրային շահերից չի բխում հետապնդման նախաձեռնումը, օրինակ, երբ կասկածյալը հանդիսանում է մարդկանց թրաֆիքինգի գոհ և կատարված հանցագործությունը հանդիսանում է նրա թրաֆիքինգի ենթարկվելու անմիջական հետևանք: Այսպիսի համակարգերում, երբ առկա է հարկադրանքի փաստը, դատախազի հայեցողությամբ է որոշվում հետապնդման դադարեցումը հանցագործության բացակայության հիմքով<sup>81</sup>: Եթե

<sup>81</sup> Տես՝ Մարդկանց թրաֆիքինգ և մաքսանենգություն, իրավական ուղեցույց, Անգլիա, 2012թ.

սկսվում է հետապնդումը, ապա դատարանը պետք է լիազորված լինի կարճել վարույթը՝ գործընթացի չարաշահման հիմքով<sup>82</sup>, կամ էլ կարճել վարույթը՝ ՄԻԵԳ<sup>83</sup>-ի հոդված 4-ի և 6-ի դրույթների խախտման հիմքով:

Մյուս է, որ մարդկանց թրաֆիքինգի ենթարկվելը պետք է դիտարկել միայն որպես մեղադրանքը կամ պատիժը մեղմացնող հանգամանք: Պատժի մեղմացումն ու անպատժելիության սկզբունքը նույնական չեն, քանի որ մեղմացման դեպքում հաշվի չի առնվում թրաֆիքինգի գոհի իրական կարգավիճակը: Թրաֆիքինգի գոհի կամքը և որոշում կայացնելու ազատությունը սովորաբար նրան չեն պատկանում, և նրանք չեն կարող պատասխանատվություն կրել իրենց կողմից կատարված անօրինական գործողությունների համար, որոնք կատարվել են այլընտրանքի բացակայության հետևանքով՝ թրաֆիքինգ իրականացնողների կողմից հսկողության իրականացման պատճառով: Այն դեպքերում, երբ ապացուցվում է, որ տվյալ անձը մարդկանց թրաֆիքինգի գոհ է, քրեական գործը պետք է կարճվի, որպեսզի տվյալ անձը չունենա քրեական «պատմություն» իր անունով այն հանցագործությունների համար, որոնք նա կատարել է մարդկանց թրաֆիքինգի ենթարկվելու ժամանակահատվածում կամ դրա հետևանքով:

***Մարդկանց թրաֆիքինգ՝ հանցավոր գործունեության մեջ հարկադրաբար ներգրավվելով (թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններ)***

2006 և 2008 թվականներին ոստիկանությունը նկատեց, որ թմրամիջոցների առուվաճառքով զբաղվող մի քանի հարյուր անձինք անօրինական բնակվում են Բելգիայի մի շրջանում: Նրանց հավաքագրել էին Մարոկկոյում՝ արտասահմանում աշխատելու կեղծ առաջարկով: Թեև նրանցից շատերը տեղյակ էին, որ աշխատանքը կապված է լինելու թմրամիջոցների առուվաճառքի հետ, բայց անձանց մի մասին խոստացել էին շինարարության ոլորտում օրինական աշխատանք Բելգիայում: Սակայն, երկիր ժամանելուց հետո, կազմակերպված հանցավոր խումբը առգրավեց նրանց անձնագրերը և հարկադրեց (ուժի սպառնալիքի կիրառմամբ, զենքի օգտագործմամբ) զբաղվել թմրամիջոցների առուվաճառքով՝ իրենց ճանապարհաձախսի և կեցության ծախսերը վերադարձնելու համար: 2008 թվականին Բելգիայի վերաքննիչ քրեական դատարանը ուսումնասիրել էր նմանատիպ մի գործ և 15 անձի դատապարտել՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար: Ավելին, գոհերի վկայությունների հիման վրա հանցագործներից երկուսը դատապարտվել էին նաև հանցագործություն կատարելու նպատակով մարդկանց թրաֆիքինգի ենթարկելու համար՝ գոհերի խոցելիությունը շահարկելով, բռնության սպառնալիքով և խաբեության կիրառմամբ: Բանվորները ճանաչվեցին որպես թրաֆիքինգի գոհեր, որոնք համագործակցեցին իրավապահ մարմինների հետ և չդատապարտվեցին: Մի քանի ամիս անց նույն դատարանն ուսումնասիրեց մեկ այլ դեպք: Հանցավոր խումբը հավաքագրում էր մարոկկացիներին և ավժիրցիներին Մարոկկոյում, Ալժիրում և Իսպանիայում: Այնուհետև նրանց տեղափոխում էին Բելգիա: Երբեմն հանցագործները կազմակերպում էին հատուկ վարժանքներ բանվորների համար՝ թե ինչպե՞ս իրականացնել անօրինական գործողություններ: Հանրային դատախազը, համագործակցելով մարդկանց թրաֆիքինգի գոհերին աջակցություն ցուցաբերող ՀԿ -ի հետ, պայքարեց, որպեսզի նրանցից մեկը ճանաչվի որպես թրաֆիքինգի գոհ, այլ ոչ թե որպես

<sup>82</sup> Անգլիայի Վերաքննիչ դատարանի գործ, 2012թ.

<sup>83</sup> Անգլիայի Գերագույն դատարանի որոշման համեմատությամբ, 2012թ.

հանցագործ՝ քանի որ նրա նկատմամբ հանցավոր խումբն իրականացրել էր ճնշումներ և սպառնալիքներ: Հանցագործներին դատապարտեցին թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար, իսկ մարդկանց թրաֆիքինգի համար՝ ոչ:

***Անպատեղիության սկզբունքի կիրառումը մարդկանց թրաֆիքինգի ենթարկված կնոջ նկատմամբ, որը կասկածվում էր այլ անձանց թրաֆիքինգի ենթարկվելու մեջ***

Հուլանդիայի՝ թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով ազգային հատուկ զեկուցողի գրասենյակը տեղեկացրեց մի դեպքի մասին, որը վերաբերում է պատժի չկիրառմանը Ա-ի նկատմամբ, ով ճանաչվել էր որպես թրաֆիքինգի զոհ և կասկածվում էր այլ անձանց շահագործման ենթարկելու մեջ: Դրանից առաջ մի դեպքով Հաագայի<sup>84</sup> տարածքային դատարանի կողմից մարդկանց թրաֆիքինգի զոհը չենթարկվեց քրեական պատասխանատվության՝ ԵԽ կոնվենցիայի հոդված 26-ի պահանջների համաձայն և հետևյալ պատճառաբանությամբ.

- Նա աշխատել է նաև որպես մարմնավաճառ և վաստակած գումարը փոխանցել է կասկածյալին
- Նա հսկողություն էր իրականացնում այլ կանանց նկատմամբ՝ սակայն բռնություն չէր իրականացնում
- Այլ կանայք նրան ընդունում էին որպես զոհ, այլ ոչ թե որպես թրաֆիքինգ իրականացնող
- Նա գործում էր մեղադրվողի ազդեցության տակ, քանի որ նա կապված էր վերջինիս հետ և դեռ սիրում էր կասկածյալին
- Նա հսկողություն էր իրականացնում այլ կանանց նկատմամբ՝ կասկածյալի կողմից բռնության չենթարկվելու համար: Նա վախենում էր կասկածյալից:

ԵԱՀԿ-ի հատուկ ներկայացուցիչն այնուհետև նշում է, որ պատժի չկիրառման պարտավորությունը չի սահմանափակվում պատժով, որը հարկադրվում է որպես քրեական հետապնդման արդյունք: Այն դեպքում, երբ անձը ենթարկվել է մարդկանց շահագործմանը և դրա արդյունքում անկարող էր գործել ինքնուրույն, անգամ պատիժ չպարունակող մեղադրանքը իրականում համարվում է պատժամիջոց: Դատապարտման առկայությունն անգամ ինքնին հանդիսանում է պատիժ և կարող է բացասական հետևանքներ ունենալ թրաֆիքինգի զոհի հետագա ճակատագրի վրա, քանի որ նրանք կունենան դատվածություն, և որպես արդյունք, հնարավոր է, չկարողանան զբաղվել որոշակի գործունեությամբ՝ ներառյալ ազատ տեղաշարժի սահմանափակումը (օրինակ՝ արգելվի ճամփորդել այլ երկիր):

Այսպիսով, պատժի չկիրառման արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ունենալ հստակ և հատուկ օրենսդրություն ու քաղաքականություն: Կախված տվյալ երկրի ինստիտուցիոնալ և իրավական համակարգերից՝ երկրի խորհրդարանը, արդարադատության նախարարությունը և/ կամ դատախազությունը կարող են նախաձեռնել ուղեցույցի մշակում՝ դրանում ներառելով անպատեղիության սկզբունքի իրականացման համար անհրաժեշտ չափորոշիչներ<sup>85</sup>: Շատ կարևոր է, որ այսպիսի ուղեցույցը կամ օրենսդրությունն

<sup>84</sup> Հաագայի տարածքային դատարան, 2009թ. Դեկտեմբերի 18  
<sup>85</sup> Օրինակի համար՝ տես Անգլիայի Մարդկանց թրաֆիքինգի և մաքսանենգության իրավական ուղեցույց, 2012թ.  
35

առաջնահերթություն համարի մարդկանց թրաֆիքինգի՝ որպես լուրջ հանցագործության գոհերի իրավունքների պաշտպանությունը:

Քաղաքականությունը և իրավական ուղեցույցն անհրաժեշտ են նաև երաշխավորելու, որ թրաֆիքինգի գոհերը չեն պատժվի, եթե դիմեն ժամանակավոր կացություն ստանալու կամ աշխատանքի թույլտվություն ստանալու համար: Հատկապես կարևոր է, որ այսպիսի ուղեցույցն ուղղված լինի միգրացիոն ծառայություններին՝ երաշխավորելու գոհերի իրավունքների պաշտպանությունը և մարդկանց թրաֆիքինգի հետապնդումը, դրանք առավել կարևորելով, քան միգրացիոն հսկողությունը: Երբ որոշվում է մարդկանց թրաֆիքինգի ենթարկվելու ժամանակ կատարված հանցագործության համար «քրեական պատմություն» ունեցող գոհին կամ արտաքսման որոշում ստացած և թյուրիմացաբար որպես անօրինական միգրանտ նույնացված անձին ժամանակավոր կացության թույլտվության տրամադրման հարցը, միգրացիոն ծառայությունները պետք է մանրազնին քննեն գործի բոլոր հանգամանքները: Ավելին, քանի որ թրաֆիքինգի գոհը հարկադրված էր կատարել հանցագործությունը՝ թրաֆիքինգի ենթարկվելու հետևանքով, միգրացիոն ծառայությունները պետք է երաշխավորեն, որպեսզի այս հանգամանքները երկրում մնալուն արգելելու կամ այդ անձին անցանկալի օտարերկրացի համարելու պատճառ չդառնան :

Անպատժելիության սկզբունքի իրականացման վերաբերյալ քաղաքականության և իրավական ուղեցույցի պատրաստ լինելուն պես այն պետք է լայնորեն տարածվի և ուղեկցվի վերապատրաստման դասընթացներում իրավապահների, միգրացիոն ծառայության աշխատակիցների, դատախազների և դատավորների, ինչպես նաև թրաֆիքինգի գոհերի և ՀԿ-ների ներկայացուցիչների ներգրավելով: Հատկապես կարևոր է, որպեսզի ուղեցույցը և վերապատրաստման դասընթացները տրամադրվեն այն դատախազական և իրավապահ ծառայությունների աշխատակիցներին, ովքեր մասնագիտացված չեն մարդկանց թրաֆիքինգի հարցերում, բայց ովքեր կարող են առնչվել դրա հետ հարակցվող հանցագործությունների հետ, ինչպիսիք են, օրինակ, գողությունը կամ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունները, որոնք կատարվել են թրաֆիքինգի գոհերի կողմից հարկադրանքի ներքո:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Մարդկանց թրաֆիքինգի գոհերը լուրջ հանցագործությունների և մարդու իրավունքների ոտնահարման գոհեր են: Միջազգային օրենսդրության համաձայն, պետությունը պարտավոր է երաշխավորել գոհերի իրավունքների պաշտպանությունը՝ ներառյալ պատշաճ ձևով որպես թրաֆիքինգի գոհ նույնացման իրավունքը, և հենց այս նույնացումն է հանդիսանում նրանց պաշտպանության ելակետը: Պատժի չկիրառելը հիմնական միակ սկզբունքը չէ, որը հարգում և պաշտպանում է թրաֆիքինգի գոհի իրավունքները, ներառյալ՝ հետապնդումից և անարդար վարույթի իրականացումից ազատ լինելու իրավունքը, դրան պետք է ավելանան նաև կրկնագոհացումից պաշտպանված լինելը, անվտանգություն և աջակցություն ստանալու առաջարկը: Այս իրավական սկզբունքին հետևելը նույնպես օգնում է թրաֆիքինգի գոհերի նկատմամբ պետության ստանձնած պարտավորությունների կատարմանը՝ ՄԻԵԴ-ի Ռանցեն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի գործի օրինակով: Այս գործով դատարանը վճռեց, որ մարդկանց թրաֆիքինգն ընկնում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հոդված 4-ի պաշտպանության շրջանակի մեջ, և որ պետության պարտավորությունն է քննությունն իրականացնել մարդկանց թրաֆիքինգի հետ կապված գործերով, երբ հավաստի կասկածներ կան այն մասին, որ անձը ենթարկվել է թրաֆիքինգի: Այսպիսի դեպքերում, երբ տեղի չի ունենում թրաֆիքինգով զբաղվողի նկատմամբ քննություն, բայց իրականացվում է թրաֆիքինգի գոհի դատապարտում, առկա է մարդու իրավունքների կոպիտ ոտնահարում, ինչպես նաև պետության պարտավորությունների կատարման նկատմամբ թերացում՝ ԵՄ օրենքի և մարդու իրավունքների տեսանկյունից: Մարդու թրաֆիքինգի գոհերը նաև ծանր հանցագործության վկաներն են: Անպատժելիության սկզբունքը, եթե իրականացվի ճիշտ, անաչառորեն և արդարացի, թույլ կտա պետություններին՝ բարելավել իրենց պաշտպանության ապահովման աստիճանը՝ միևնույն ժամանակ ապահովելով հարգանք մարդկանց թրաֆիքինգի գոհերի անվտանգության և արժանապատվության նկատմամբ, հասկանալով, որ նրանք չէին կատարի այդ հանցագործությունը, եթե չգտնվեին թրաֆիքինգի գոհի կարգավիճակում:

**ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՕՐԵՆՍԴԻՐՆԵՐԻՆ ԵՎ ԴԱՏԱԽԱՋՆԵՐԻՆ՝  
ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Մարդկանց թրաֆիքինգի գոհերի պաշտպանությունը բոլոր պետությունների համար կարևոր խնդիր ու պարտավորություն է:
2. Մարդկանց թրաֆիքինգի գոհերի դատապարտումն այն հանցագործությունների համար, որոնք կապված են կամ հետևանք են մարդկանց թրաֆիքինգի ենթարկվելու, արդարության լուրջ խախտում է: Պետությունները պարտավոր են չիրականացնել պատիժներ թրաֆիքինգի ենթարկված անձանց նկատմամբ այն հանցագործությունների համար, որոնք նրանք կատարել են թրաֆիքինգի ենթարկվելու արդյունքում կամ դրա հետևանքով:
3. Թրաֆիքինգի ենթարկված անձանց նկատմամբ միջազգային օրենսդրությամբ սահմանված անպատժելիության սկզբունքը պետք է պետությունների կողմից արդյունավետ իրականացվի և՛ քրեական արդարության համակարգում, և՛ պրակտիկայում:
4. Պետությունների քրեական արդարության քաղաքականությունը և պրակտիկան մարդկանց թրաֆիքինգի ոլորտում պետք է որդեգրեն մարդու իրավունքների պաշտպանության և գոհակենտրոն մոտեցումներ: Պետությունները պետք է խրախուսեն ոստիկաններին, դատախազներին և դատավորներին՝ մարդկանց թրաֆիքինգի գոհերին վերաբերվել որպես ծանր հանցագործության և մարդու իրավունքների ռստահարման գոհերի:
5. Պետությունները պետք է ստեղծեն արդյունավետ մեխանիզմներ մարդկանց թրաֆիքինգի գոհերին արագ նույնացնելու համար, որպեսզի գոհերը չենթարկվեն պատասխանատվության այն հանցագործությունների համար, որոնք կատարել են մարդկանց թրաֆիքինգի ենթարկվելու արդյունքում կամ դրա հետևանքով: Այսպիսի մեխանիզմները պետք է նախատեսեն ապացույցների արագ հավաքում՝ օգնելու հասկանալ, արդյո՞ք կասկածյալը հանդիսանում է թրաֆիքինգի գոհ, թե՛ ոչ:
6. Վաղ նույնացումը խիստ կարևոր է, և պետությունները պետք է ապահովեն թրաֆիքինգի գոհերին հանդիպելու մեծ հավանականություն ունեցող պետական պաշտոնյաների՝ ինչպիսին են օրինակ ոստիկանները, սահմանապահները, աշխատանքի տեսուչները, բժիշկները, ինչպես նաև անօրինական միգրանտների ազատագրկման կենտրոնների աշխատակիցների վերապատրաստումն այս ուղղությամբ: Այդ վերապատրաստումները պետք է ներառեն թրաֆիքինգի գոհերի նույնացման հետ կապված հարցերը, ինչպես նաև անպատժելիության սկզբունքի կիրառման ուղեցույցը:
7. Նույնացման արդյունավետ համակարգերը պետք է ստեղծվեն՝ ապահովելով մարդկանց թրաֆիքինգի գոհերի հիմնական օգնության և աջակցության տրամադրումը՝ նրանց կարիքներին և իրավունքներին համապատասխան: Այս նպատակով, միջգերատեսչական համագործակցությունը պետական պաշտոնյաների և ՀԿ-ների միջև պետք է խրախուսվի և պետք է ստեղծվեն ազգային ուղղորդման մեխանիզմներ՝ դրանով իսկ պաշտոնապես ճանաչելով ՀԿ-ների ներդրումը և դերակատարումը թրաֆիքինգի գոհերի նույնացման և աջակցության տրամադրման գործընթացում:
8. Մարդկանց թրաֆիքինգի գոհի՝ պատժի չենթարկվելու իրավունքը կապված է և՛ որպես գոհ, և՛ որպես կասկածվող քրեական գործում ներգրավվելու դեպքում այդ գործի նյութերին ծանոթանալու իրավունքի հետ: Այն պահից, երբ ի հայտ են գալիս հիմնավոր

կասկածներ, որ կասկածյալը թրաֆիքինգի հավանական գոհ է, պետությունները պարտավոր են ուսումնասիրել գործը և կասկածյալի թրաֆիքինգի գոհ հանդիսանալու ապացույցների առկայության դեպքում գոհին պետք է վերաբերվեն որպես ծանր հանցագործության գոհի՝ անհապաղ դադարեցնելով նրանց նկատմամբ քրեական հետապնդումն այդ հանցագործությունների կատարման մասով:

9. Գործի քննության շրջանակներում իրավապահ մարմինները, կասկածելով կասկածյալի՝ մարդկանց թրաֆիքինգի գոհ լինելու հանգամանքի մասին, անմիջապես պետք է զեկուցեն այդ փաստը և սկսեն այդ ուղղությամբ ապացույցների հավաքումը:
10. Քանի դեռ շարունակվում է անձի որպես մարդկանց թրաֆիքինգի գոհ նույնացնելու գործընթացը, այդ անձի արտաքսումը երկրից պետք է կանխվի, և նրանք անմիջապես պետք է ստանան իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Ավելին, դատախազը և/ կամ դատավորն իրենց նախաձեռնությամբ պետք է կասեցնեն վարույթը՝ գոհի նույնացման գործընթացի արդյունքները հաշվի առնելու համար:
11. Մարդկանց թրաֆիքինգի երեխա գոհերը հատկապես խոցելի են: Նրանք պետք է շատ արագ նույնացվեն որպես թրաֆիքինգի ենթարկված երեխաներ, և նրանց լավագույն շահերը պետք է մշտապես կարևորվեն: Մարդկանց թրաֆիքինգի երեխա գոհերը պետք է ստանան համապատասխան աջակցություն և պաշտպանություն՝ հաշվի առնելով նրանց խոցելիությունը, իրավունքներն ու կարիքները:
12. Այն դեպքում, երբ մարդկանց թրաֆիքինգի ենթարկված գոհի տարիքը հայտնի չէ, և հիմքեր կան կարծելու, որ նա երեխա է, ապա հարկավոր է վերաբերվել նրան որպես երեխայի և ցուցաբերել համապատասխան վերաբերմունք:
13. Եթե նրանց կողմից կատարված իրավախախտումը փոխկապակցված է մարդկանց թրաֆիքինգի հետ կամ հանդիսանում է թրաֆիքինգի ենթարկվելու հետևանք, ապա երեխա գոհերը պետք է պաշտպանված լինեն հետապնդումից և դատապարտումից: Եթե կասկածներ կան կատարված հանցագործության և մարդկանց թրաֆիքինգի միջև առկա փոխկապակցվածության մեջ, ապա իրավապահ մարմինները և դատախազները պետք է կարևորեն երեխաների բարեկեցությանը ուղղված գործունեությունը, խուսափեն երեխային ցավ պատճառելուց, ելնեն նրա լավագույն շահերից, հաշվի առնելով տվյալ գործի յուրահատկությունները:
14. Երեխայի համաձայնությունն անօրինական գործողությունների կատարման համար, երբ նա գտնվում է մարդկանց թրաֆիքինգի կարգավիճակում, չի կարող ստորադասել այդ երեխայի գոհի կարգավիճակը: Գործի քննության ընթացքում իրավապահ մարմինները չպետք է երեխային հարցնեն շահագործվելու համար նրա համաձայնության մասին: Քննության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները որևէ կերպով չպետք է օգտագործվեն երեխայի դեմ՝ դատարանի կողմից քրեական պատասխանատվության ենթարկելու համար:
15. Մարդկանց թրաֆիքինգի երեխա գոհերը չպետք է տեղափոխվեն ոստիկանական խցեր կամ ազատագրկման այլ վայրեր:
16. Պետությունները պետք է ընդունեն օրենսդրություն՝ ապահովելու մարդկանց թրաֆիքինգի գոհերի կամ հնարավոր գոհերի իրավունքների իրական և արդյունավետ պաշտպանությունը: Այս պարտավորությունը ներառում է երաշխիքն առ այն, որ այդ անձինք չեն հետապնդվի կամ պատժվի այն հանցագործությունների համար, որոնք կատարել են թրաֆիքինգի ենթարկվելու արդյունքում կամ թրաֆիքինգի հետևանքով:

Պատժի չիրականացումը իրավունք է, որի նպատակն է պաշտպանել թրաֆիքինգի ենթարկված զոհերին, և որը պետք է ամրագրվի օրենսդրությամբ:

17. Պետությունները պետք է մտածեն մարդկանց թրաֆիքինգի հետ փոխկապակցված/ առնչվող հանցագործությունների այն տիպական ցանկի մշակման մասին, որոնց կատարման համար թրաֆիքինգի ենթարկված անձը չի ենթարկվի պատասխանատվության: Պետք է հստակ սահմանել, որ այդ ցանկը սպառիչ չէ, և անպատժելիության սկզբունքը կիրառելի է նաև այլ հանցագործությունների կատարման դեպքում, եթե դրանք իրականացվել են թրաֆիքինգի ենթարկվելու արդյունքում կամ թրաֆիքինգ ենթարկվելու հետևանքով: Այդ ցանկը պետք է տարածվի դատախազների և իրավապահ մարմինների շրջանում: Նմանատիպ ուղեցույցը պետք է նաև տրամադրվի թրաֆիքինգի զոհերի փաստաբաններին, ՀԿ-ների հետ աշխատառող փաստաբաններին: Այն նաև պետք է ներառվի դատախազների և ոստիկանների վերապատրաստման կուրսերում և ուղեցույցներում:
18. Մարդկանց թրաֆիքինգի զոհերի նկատմամբ միջազգային օրենսդրությամբ ամրագրված անպատժելիության սկզբունքը տարածվում է ինչպես անդրազգային, այնպես էլ՝ ներքին թրաֆիքինգի դեպքերի վրա:
19. Քանի որ որոշ երկրներ քրեականացրել են մարդկանց թրաֆիքինգի որոշ բաղադրիչները, հատկապես հարկադիր աշխատանքը, կարևոր է պատժի չկիրառումը տարածել նաև հարկադիր աշխատանքի դեպքերի վրա, երբ հարկադիր աշխատանքի ենթարկված զոհերը ստիպված են եղել կատարել իրավախախտումներ:
20. Անպատժելիության սկզբունքը չի սահմանափակվում ազատելով այն պատիժներից/ տույժերից, որոնք հարկադրվել են որպես քրեական պատասխանատվություն :
21. Անպատժելիության սկզբունքի կիրառումը չի սահմանափակվում միայն պատասխանատվությունից ազատելով: Պատիժների/ տույժերի չենթարկելով դատապարտումը նույնպես կարող է պատժամիջոց լինել, եթե զոհն արդյունքում ունենում է «քրեական պատմություն»/ դատվածություն: Տույժերին վերաբերող այլ միջոցներ նույնպես պետք է չկիրառվեն: Այդպիսի միջոցները ներառում, բայց չեն սահմանափակվում փակ կացարաններում կամ վարչական այլ կալանավայրերում թրաֆիքինգի զոհերին հարկադիր պահելով:
22. Երբ հաստատվում է, որ հանցագործությունը կատարվել է մարդկանց թրաֆիքինգի ենթարկվելու արդյունքում կամ թրաֆիքինգի ենթարկվելու հետևանքով, պետությունը պետք է քայլեր ձեռնարկի ապահովելու թրաֆիքինգի զոհի պատժից ազատելն և դատվածություն չունենալու պայմանները:
23. Պետությունները պետք է երաշխավորեն պատժի չկիրառման լիարժեք և արդյունավետ իրականացումը: Պետությունը պետք է որոշում կայացնի, արդյո՞ք թրաֆիքինգի զոհի կողմից կատարված հանցագործությունը փոխկապակցված է թրաֆիքինգի հետ, թե՛ ոչ: Եթե այն փոխկապակցված չէ, ապա թրաֆիքինգի զոհն ընդհանուր հիմունքներով ենթակա է հետապնդման և դատապարտման: Եթե այդ փոխկապակցվածությունն առկա է, ապա անվերապահորեն պետք է կիրառվի անպատժելիության սկզբունքը:
24. Այն պետություններում, որտեղ կա մեղադրանք առաջադրելու հայեցողական համակարգ, լիազորված մարմինները չպետք է հետապնդեն զոհերին: Այն դեպքում, երբ կապն ի հայտ է գալիս հետապնդման ժամանակ, թրաֆիքինգի զոհի դեմ գործը պետք է կարճվի: Այն դեպքում, երբ հստակ չէ կապը հանցագործության և թրաֆիքինգի միջև, գործն ընդհանուր հիմունքներով կարող է շարունակվել կամ էլ կասեցվել:



Այլապես, երբ հետապնդումը սկսվել է և չի կասեցվել, դատարանը կարող է պահպանել հետապնդումը՝ վարույթի չարաշահման հիման վրա: Այն դեպքում, երբ դատարանը և դատախազը չեն դադարեցնում հետապնդումը՝ հանցագործության և թրաֆիքինգի ենթարկված անձի միջև կապի առկայության դեպքում, այդ հետապնդումը կարող է ճանաչվել անօրինական:

25. Հանրային մեղադրանքով իրավական համակարգեր ունեցող պետությունները պետք է փոփոխեն իրենց օրենսդրությունը և ներառեն պատժի չկիրառման հատուկ սկզբունքը՝ թրաֆիքինգի գոհերի նկատմամբ հետապնդման վաղ փուլում կասեցման համար: Այս դեպքում, երբ դատավորը և/ կամ դատախազն ընդունում են այն փաստերը, որոնք թույլ են տալիս մեղադրյալին պատասխանատվության չենթարկել, հետապնդումը պետք է անհապաղ դադարեցվի նախաքննության փուլում: Հետապնդումը շարունակելու դեպքում դատարանը դատաքննության ընթացքում պետք է կիրառի պատասխանատվության չենթարկելու սկզբունքը՝ ապացուցված համարելով արդարացման հիմքերը:
26. Պատժի չկիրառման իրականացման իրավունքը պետք է նույնպես պաշտպանվի՝ բողոքարկման ներկայացման ժամանակ: Նոր ապացույցը, որը վկայում է անձի մարդկանց թրաֆիքինգի ենթարկվելու մասին, և որ հանցագործությունն իրականացվել է նրա՝ թրաֆիքինգի ենթարկվելու արդյունքում կամ թրաֆիքինգի հետևանք է, պետք է թույլատրելի լինի բողոքի ներկայացման ժամանակ:
27. Թրաֆիքինգի հետ կապված հանցագործությունների համար դատապարտված կամ դրանց կատարման մեջ մեղադրվող գոհերը չպետք է զրկվեն իրենց կացության կամ աշխատանքի իրավունքներից, որոնք նրանք ստացել են որպես թրաֆիքինգի գոհ: Մարդկանց թրաֆիքինգի գոհի դատապարտումը թրաֆիքինգի հետ կապված հանցագործության կատարման համար չպետք է պատճառ հանդիսանա նրան կացության կարգավիճակ տրամադրելուց զրկելու կամ այդ կարգավիճակը չերկարաձգելու համար:
28. Պետությունները պետք է խրախուսեն իրավական վերապատրաստման ինստուտուտներին՝ հիմնել մարդկանց թրաֆիքինգի մասին մշտական վերապատրաստման դասընթացներ դատախազների և դատավորների համար, որպեսզի նրանք միշտ տեղեկացված լինեն մարդկանց թրաֆիքինգի հետ կապված խնդիրների մասին, ինչպիսիք են ժամանակակից ստրկության արդի վիճակը, մարդկանց թրաֆիքինգի կազմակերպիչների վերահսկման մեթոդները և իրավիճակները, որոնց պարագայում թրաֆիքինգի գոհը կարող է կատարել հանցագործություն, ինչպես նաև թրաֆիքինգի գոհերի նկատմամբ պատժի չկիրառումը:
29. Պետությունները պետք է խրախուսեն ազգային հատուկ զեկուցողներին կամ համարժեք այլ մեխանիզմներին՝ ժամանակ առ ժամանակ վերանայել մարդկանց թրաֆիքինգի գոհերի՝ հատկապես կանանց և երեխաների նկատմամբ անպատժելիության սկզբունքի գործնական կիրառումը: